




ԱՄՍՏՐԱԼԻՈՅ ԵՒ ՆՈՐ ՉԵԼԱՆՏԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ

ՓԱՐՈՍ *Paros*

ISSUE 100 NOVEMBER / ԹԻԻ 100 ՆՈՅԵՄԲԵՐ 2025

NEWSLETTER OF THE DIOCESE OF
THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND

100TH
ISSUE



ՀՆԴԻԿ ՄԱԼԱՆՔԱՐԱ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ՊԱՍԻԼԻՈՍ ՄԱՐԹՈՍԱ ՄԱԹԵՈՒՍ Գ.Ի
ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՕՐՀՆԱԲԵՐ ԱՅՅԸ

Թեմական Լուրեր



Կիր., 1 Նոյեմբեր – Գերաշնորհ Տեր Վարդան Եպիսկոպոս Նալասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը, ընկերակցությամբ Արժանապատիվ Տեր Ալեոսիս Քահանայ Համբարձումեանի, Համազգային Գոլստըն Ճեմարանի Նալպանտեան սրահին մեջ մասնակցեցաւ արդէն չորրորդ

անգամ կազմակերպուող « Պատանի Հայագէտ» թիւ 4 հայագիտական զարգացման մրցումին, որ 2022-էն ի վեր կը կազմակերպուի Համազգային Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան հովանիին ներքեւ գործող «Պատանի Հայագէտ Յանձնախումբ»ին կողմէ:

Այս տարուան թեման էր ԱՐՅԱԽ-ը:

Հանդիսութիւնը սկսաւ Հայաստանի եւ Արցախի քայլերգներով եւ մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ ի յարգանս Արցախեան պատերազմներու զոհերուն: Տիկնայք Ալիս Մանուկեանի եւ Աննա Չոքեքճեանի բացման խօսքէն ետք, Տիկին Չոքեքճեան ստանձնեց հարթակը եւ բացատրութիւն տուաւ ընթացակարգին մասին: Եւ սկսաւ մրցումը: Հայկական վեց վարժարաններէ չորսական 11-12 տարեկան աշակերտներ մասնակցեցան:

Այդ վարժարաններն են.

ՀԲԸՄ Ալեքսանտր Վարժարան

Համազգային Արշակ եւ Սօֆի Գոլստըն

Ճեմարան

Համազգային Թարգմանչաց Վարժարան

Համազգային Թումանեան Վարժարան

Համազգային Սերոբ Փափագեան Վարժարան

Համազգային Մեսրոպ Մաշտոց-Մաթեոսեան Վարժարան (Մելպուրն)

Աշակերտները վիճակաձգութեամբ բաժնուեցան 4 խումբերու՝ Բազէ, Աղաւնի, Արծիւ եւ Ծիծեռնակ, իւրաքանչիւր խումբ՝ 6 աշակերտ, մէկական աշակերտ իւրաքանչիւր դպրոցէ:

Դատական կազմը կը բաղկանար Տիկին Ալին Մարաշլեան-Քէլվանեանէ, Տիարք Ասատուր Շուկայեանէ եւ Արեգ Եափուճեանէ:

Հարցերը կը վերաբերէին Արցախի պատմութեան, բարբառին, բարքերուն, կերակուրին, հոգեւոր աշխարհին:

Հարիւրեակ մը ներկաները եւ փոքր թիւով ուղիղ եթերով հետեւողները բազում նոր գիտելիքներով հարստացան Արցախի մասին, ինչպէս իրենց խօսքերուն մէջ վկայեցին Սրբազան հայրն ու Պրն Շուկայեան:



Մեծ խանդավառություն ըստեղծեց այն երեւոյթը, թէ մասնակից աշակերտները վճռական էին վերադարձնել Արցախը՝ հայրութեան եւ Արցախցին՝ Արցախ: Եւ ինչպէս Տիկին Չոքեքճեան նշեց՝ այսօրուան վճռական պատանին վաղուան վըճռական ղեկավարն է:

Մրցումը աւարտեցաւ «Ծիծեռնակ» Խումբի յաղթանակով (62 կէտ): Արծիւ խումբը ստացաւ 58, Բագէն՝ 51 իսկ Ադանի խումբը՝ 50:

Կազմակերպիչ յանձնախումբը պարգևատրեց բոլոր մասնակիցները յատուկ վկայագրերով: Համագգային Միտնի Պարի Անսամբլի 25-ամեակի առթիւ հայրենի վաստակաւոր արուեստագետ տուտուկահար Կամօ Սէյրանեան եւ դուստրը՝ Սեդա, տուտուկով, քլարինէթով եւ Սեդային որակաւոր երգերով մթնոլորտը ճոխացաւ եւ հայկական շուրջպարը համակեց ներկաները:

Յայտագրի աւարտին խօսք առին դատական կազմի անդամներ՝ Ասատուր Շուկայեան եւ Ալին Մարաշլեան, որոնք իրենց գնահատանքը յայտնեցին բոլոր անոնց որոնք դերակատարութիւն ունեցան այս հոյակապ ձեռնարկին յաջողութեան մէջ:



իր տիրոջ՝ Հայ ազգին վերադարձը: «Այս մրցոյթը խթան կը հանդիսանայ զարգացնելու ձեր Հայերէնի պաշարը եւ ազգային ինքնութեան զգացումը» եզրափակեց Վարդանեան:

«Ուրախ կ'ըլլամ ամէն անգամ որ Հայկական Վարժարան մը ոտք կը դնէմ, այնտեղ հայու շունչը կը վերակենդանանայ սրտիս ու մտքիս մէջ» բառերով իր փակման խօսքն սկսաւ Սրբազան հայրը: Ան իւրայատուկ որակեց այս ձեռնարկը, որ Համագգայինի առաքելութեան գործնականացման արտայայտութիւնն է, եւ որ կը ծառայէ հայապահպանութեան, հայեցի կրթութեան եւ ոգիի պահպանութեան: «Այսօր վկայ եղայ այս պատանիներուն հայագէտ դառնալու ապագային» ըսաւ Սրբազանը, մաղթելով անոնց հայագիտութեան ճանապարհի շարունակութիւն եւ նոր հորիզոններու նուաճում:

Սրբազանը գերգնահատեց Արցախի թեման ընտրելու գաղափարը եւ մեզ բոլորս ճամբորդներ դարձնելու դէպի Պատմական Արցախ: Սրբազանը գնահատեց միացեալ ճիգը ձեռնարկը յաջողցնելուն մէջ:

Նախքան Սրբազան Հայրը, բեմ հրաւիրեցաւ Շրջանային Վարչութեան ատենապետ Պրն Գեորգ Վարդանեանը որ գնահատեց նիւթի ընտրութիւնը, բոլոր վարժարաններու տնօրէնները, մասնակից պատանիներն ու կազմակերպիչ յանձնախումբը, դպրոցներու ուսուցիչները իրենց անվերապահ աջակցութեան համար: Ծնորհաւորելէ ետք յաղթող խումբը ան ըսաւ «... սակայն իրական յաղթանակ տանողը եղաւ Հայ մշակոյթը եւ Հայ դպրոցը»: Իսկ խօսքը ուղղելով աշակերտներուն, Վարդանեան հաստատեց որ Պատանի Հայագետին մասնակցելով անոնց առջեւ դուռ կը բացուի ապագայ ազգային գործունէութեան, որոնց մէջ կ'իյնայ Արցախի

Սակայն ան մեծ գնահատանքով արտայայտուեցաւ Հայ ուսուցիչներուն մասին, որոնց տարած անգուգական աշխատանքին առջեւ կարելի է միայն խոնարհիլ:
Ապա Սրբազանը Պահպանիչով փակեց հանդիսութիւնը, որմէ ետք մասնակցեցաւ պատրաստուած հիւրասիրութեան:

Շաբաթ 1 Նոյեմբեր – Ընդառաջելով Հայ երիտասարդ երգիչ Չարլի Չէչի (Չէչէնեան) հրաւերին, Հօրնսպիի ԱՐԷՍԷԼ ակումբին մէջ Սրբազան հայրը ներկայ եղաւ անոր երգահանդէս-համերգին: Սրբազան հօր ընկերացաւ Պօղոս Սարկաւազ Քէլէշեան: Չարլին, շնորհիւ իր յամառ աշխատանքին, Աւստրալիոյ մէջ դարձած է անուանի երգիչ մանաւանդ մեկնաբան Ֆրանք Սինաթրայի, Մաթ Մընրոյի ոճով երգուած երգերու: Սրբազան հայրը գնահատեց Չարլին եւ իր ծնողքը, որոնք մեծ նեցուկ հանդիսացած են եւ քաջալերած որ յաջողութեան սանդիսամատերն ի վեր բարձրանայ Չարլին:



Կիրակի 2 Նոյեմբեր 2025-ի կէսօրին, Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Քահանայ հայրերուն եւ Թեմական ու Ծխական Խորհուրդներու անդամներուն, Առաջնորդարանին մէջ ընդունեց երկու մըր-ցանակակիր աշակերտներ յանձինս՝ Լէլա Չամիչեանի, Համագգային Գօլը-ստըն Ճեմարանէն եւ Թովմաս Ժամկոչեանի, William Clarke College-էն: Չամիչեան Հայերէն լեզուի բարձրագոյն նիշը ապահոված է 2024-ի HSC-ի քննութիւններուն մէջ իսկ Ժամկոչեան՝ 90 նիշ հարիւրի վրայ, ըլլալով ամենէն բարձր նիշ բերող Հայ աշակերտը Իրաւագիտական քննութեանց մէջ:

Այսպիսով, Լէլա Չամիչեան պարգևատրուեցաւ Լեւոն եւ Մարի Շեօմէլեան մրցանակով, նուրում Տոքթ եւ Տիկին Կարօ եւ Լօրա Արթինեաններու կողմէ, իսկ Թովմաս Ժամկոչեան՝ Connect Legal մրցանակով, նուիրում ընկերութեան տերերուն՝ Յակոբ Պօղոսեանի եւ Բիչըրտ Արսլանեանի կողմէ: Սրբազան հայրը գնահատեց եւ շնորհաւորեց մրցանակակիր աշակերտները, ինչպէս նաեւ մրցանակ հաստատող նուիրատուները, որոնցմէ առաջինը՝ նիւթական հատուցում իսկ երկրորդը՝ կրթաթոշակ: Աւանդութիւն դարձած այս հաւաքին հիւրասիրութիւնը կատարեց Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբը:

Նոյեմբեր 3, 2025թ., Առաջնորդարանին մէջ տեղի ունեցաւ դրամաշնորհներու նորակազմ յանձնախումբին անդրանիկ նիստը, որուն նախագահեց Առաջնորդ Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան: Նորակազմ յանձնախումբին կը մասնակցին Սիտնիի եւ Մելբուրնի Ծխական Խորհուրդներու ներկայացուցիչներ, որոնք քննարկեցին հնարաւորութիւնները նոր ծրագրիներու, որոնք պիտի զարգացնեն ծխական-համայնքային կեանքը:



Գ2., 4 Նայեմքեր – Սրբազան Հայրը եւ Դիւանապետ Նշան Պասմաճեան մասնակցեցան Նիւ Սաութ Ուելզ Էքիմենիք Խորհուրդի եկեղեցապետերու վեցամսեայ ժողովին: Սրբազան հայրը զեկուցեց Առաջնորդարանի, ծուխերու եւ համայնքային աշխատանքներուն եւ դիմագրաւած մարտահրաւերներուն մասին ինչպէս լեզուի եւ ինքնութեան պահպանում եւ այլն: Նշան Սարկաւագ զեկուցեց Նոր Զելանտայի մէջ տարուած էքիմենիք աշխատանքներուն մասին: Խորհուրդի ընդհանուր Քարտուղար Դոկտ Բոտ Պէնսըն Ժողովականները տեղեկացուց Խորհուրդի տարած ծաւալուն աշխատանքներուն մասին: Քուէքըրզ-ի ներկայացուցիչ Ուիս Շուրինկա ներկայացուց Քուէքըրզի գործունէութիւնը Աւստրալիոյ մէջ տալով նաեւ պատմական տեղեկութիւններ այս խաղաղասէր քրիստոնէական հաստատութեան մասին: Աւարտին առնուեցան կարգ մը կազմակերպչական բնոյթ կրող որոշումներ: Փակման խօսքով հանդէս եկաւ Խորհուրդի նախագահ Քարմել Իերաչի Շերաթըն Քահանայօրհին:



Գ2., 4 Նայեմքեր – Վարդան Սրբազան նախագահեց Թեմական Խորհուրդի հերթական ժողովին: Ժողովը վաւերացուց որոշումներ առնչուած ՀՀԲԿին, Արարատ Մշակութային Կեդրոնին եւ Սուրբ Երրորդութիւն եկեղեցոյ:

Ե2., 6 Նայեմքեր – Սրբազան հօր հովանաւորութեամբ եւ կազմակերպութեամբ Համագգայինի Գրական-Գեղարուեստական Յանձնախումբին, տեղի ունեցաւ Սասուն Գրիգորեանի Smart Nation Second Edition (Խելացի Ազգ) գիրքին շնորհահանդէսը Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ Էտկարեան Սրահին մէջ: Գլխաւոր բանախօսն էր Նիւ Սաութ Ուելզի նախկին նահանգապետուհի Օրիորդ Գլատիս Պերէճիքեան:



Իր երկլեզու բացման խօսքէն ետք ուղղուած վաթսունի շուրջ Հայ եւ ոչ Հայ հանդիսականներու, Տիկին Նորա Պասթաճեան հրաւիրեց Օրիորդ Պերէճիքեանը արտասանելու համար իր խօսքը: Նախկին նահանգապետուհին, նախ անսխալ Հայերէնով, ապա անգլերէնով արտասանեց իր խօսքը, ուր դրուատանքով արտայայտուեցաւ երկար տարիներու բարեկամ-գործակից Սասուն Գրիգորեանին մասին, բարձր գնահատելով նոյն հեղինակին նոյն խորագրով առաջին հատորը, հրատարակուած 2016-ին, ուր Սասուն Գրիգորեան խորհրդատուութիւն կը կատարէր Հայաստանի պետութեան, որուն 70 առ հարիւրը գործադրուած է եւ

իրականացուած պետական վարչամեքենային կողմէ:

Երկու հատորներուն հրատարակիչն է Լոնտոնի Կոմիտաս Հաստատութիւնը, որուն տնօրէն Արա Սարաֆեան տեսահոլովակով հանդէս եկաւ եւ շնորհաւորեց Սասունը իր կատարած հայրենասնուէր



գործնական աշխատանքին համար, որը խթան հանդիսացած է այս հաստատութեան հրատարակելու երկու հատորները 9 տարուան տարբերութեամբ:

Սասուն Գրիգորեան ներկայացուց իր գիրքը մանրամասնութեամբ, ուր ան խորհրդատուութիւն կատարած է Հայաստանի Սփիւռք յարաբերութեանց, Հայաստանի անվտանգութեան, Հայ Թրքական յարաբերութեանց, Հայ Ազերի յարաբերութեանց, ճարտարարուեստի, գիտութեան, արհեստական բանականութեան գործնական շահագործման, եկեղեցի-պետութիւն յարաբերութեան եւ այլ բնագաւառներու: Գրիգորեան իր շնորհակալութիւնն ու երախտագիտութիւնը յայտնեց Սրբազան

հոր, եկեղեցական մարմիններուն, Գլատիս Պերէճիքլեանին, Համագգայինին Աւստրալիոյ ընդհանրապէս մանաւանդ Գրական-Գեղարուեստական Յանձնախումբին, նաեւ Պրն Ստեփան Գրգեաշարեանին, որ իր կեանքի ընթացքին միշտ քաջալեր հանդիսացած է իրեն եւ ուղղութիւն տուած:

Նախքան «Պահպանիչ»ով փակումը, Վարդան Եպիսկոպոս Առաջնորդ Սրբազան հայրը ջերմօրէն ողջունեց բոլորը, Սասուն Գրիգորեանը, Գլատիս Պերէճիքլեանը, Համագգայինի մեծ ընտանիքը յատկապէս Գրական-Գեղարուեստական Յանձնախումբը կազմակերպելու եւ ներկայ գտնուելու այս ձեռնարկին, որը մասնակցութիւն է հայրենաշինութեան աշխատանքին: Ան Հին Կտակարանը մէջբերելով ըսաւ որ Սողոմոն Իմաստուն երանի կու տար իմաստութիւն փնտռողներուն: Սասուն Գրիգորեանի գիրքին մէջ իմաստութեան փնտռտուքը տեսաւ Սրբազան հայրը եւ հոն տեսաւ այդ գրքին մեծ արժէքը:

Սրբազանը թելադրեց իւրաքանչիւրին գտնել թէ մեր ազգին եւ հայրենիքին առաւելութիւնները ինչ են, առանց մոռնալու յիշել թէ ինչ եղած են եւ ինչ են այսօր մեր մարտահրաւերները:



Սրբազանը Հայաստանի առաւելութիւններէն մին նկատեց Քրիստոնեայ երկիր ըլլալը: Սփիւռքը օրինակ բերելով, ան դրուատանքով խօսեցաւ մեր ազգի զաւակներուն մասին, որոնք մերձաւոր արեւելեան ոչ քրիստոնեայ երկիրներուն մէջ, մնալով Հայ Քրիստոնեայ, մասնակցած են այդ երկիրներու տարբեր բնագաւառներու կեանքին եւ իրենց ներդրումը բերած այդ երկիրներու զարգացման գործընթացին:

Սրբազանը կոչ ուղղեց բոլորին, թէկուզ ֆիզիքապէս հեռու հայրենիքէն սակայն իւրաքանչիւրս մասնիկ ենք հայրենիքին, հետեւաբար պիտի մասնակցինք անոր վերելքի աշխատանքին անհատապէս թէ հաւաքաբար, միշտ ի մտի ունենալով որ քաղաքական հոսանքները, ինչպէս նաեւ իշխանութիւնները կու գան ու կ'երթան, սակայն Հայրենիքը մնայուն է ու յանձնարարական:

Մեծապէս տպաւորուած Սասուն Գրիգորեանի Հայրենիքին եւ անոր ղեկավար կառոյցներուն տուած գործնական խորհուրդներէն, Սրբազան հայրը առաջարկեց նման աշխատասիրութիւն իրականացնել նաեւ համայնքային մակարդակներու վրայ:

Փակումէն ետք տեղի ունեցաւ գիրքերու վաճառք եւ ստորագրութիւն: Սասուն Գրիգորեան գիրքերէն եկամուտը յատկացուց Համագգայինի Շրջանային Վարչութեան:





Ծխական Խորհուրդի գանձապահ Տիար Յարութ Օգճեան: Սրբազան Հայրը տեղեկացաւ Արագ մասնաճիւղի գործունէութեան մասին եւ իր զօրակցութիւնն ու աջակցութիւնը յայտնեց ՀՕՄ-ի ընտանիքին ընդհանրապէս եւ Արագ մասնաճիւղին մասնաւորապէս:

Ուրբաթ 7 Նոյեմբերին, Առաջնորդ Սրբազան Հայրը առաջնորդարանին մէջ ընդունեց Աստրալիոյ Ուքրանական Կաթոլիկ եկեղեցւոյ Քարտինալ Միքոլա Պիչոքը: Հանդիպման ներկայ էին նաեւ թեմական խորհուրդի անդամներ ու ազգայիններ: Քարտինալը ճաշի հիւրը եղաւ Սրբազան հօր:

Երկուշաբթի, 10 Նոյեմբերին, Թեմիս Առաջնորդ Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան ընդունեց ՀՕՄ-ի Արագ մասնաճիւղի վարչութեան անդամները գլխաւորութեամբ ատենապետուհի Տիկին Տալիտա Ինճէճիքեանի: Սրբազան Հօր ընկերակցեցաւ Սուրբ Յարութին Եկեղեցւոյ



հովանիին ներքոյ գործող ECWA հաստատութեան հարցերով եւ քննարկեց Սուրիոյ Քրիստոնեաներու իրավիճակը:

Ժողովի աւարտին, ժողովականները ճաշի հիւրը եղան Նոնա Արքեպիսկոպոսին:

Չորեքշաբթի 12 Նոյեմբերին, Սրբազան հայրը, Էտկարեան սրահին մէջ, ընկերային հանդիպում մը ունեցաւ անցեալին իր գլխաւորած Սուրբ Յարութին Եկեղեցւոյ Սուրբգրոց Սերտողութեան Երիտասարդական Խումբին եւ իրենց երիտասարդ ընտանիքներուն հետ: Նախկին ընկերներու վերամիացումի ուրախ առիթ մըն էր քսան տարիներ ետք:

Չորեքշաբթի 12 Նոյեմբերին, Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան մասնակցեցաւ Աստրալաիոյ Մերձաւոր Արեւելքի Առաքելական Եկեղեցիներու Պետերու (ԱՄԷՔ) հերթական ժողովին, որ տեղի ունեցաւ Ս. Թովմաս Քաղղէական Եկեղեցւոյ մէջ, Պօլի Փարք, հիւրընկալութեամբ Քաղղէական Եկեղեցւոյ Առաջնորդ Ամէլ Շամոն Նոնա Արքեպիսկոպոսին:

Ժողովականները մօտէն ծանօթացան Սրբազան Հօր, որուն առաջին մասնակցութիւնն էր ԱՄԷՔի ժողովին: Ժողովը զբաղեցաւ ԱՄԷՔի



Շաբաթ, 15 Նոյեմբեր - Թեմիս Առաջնորդը Արժ. Տեր Աշոտ Քինյ. Աբրահամեանի և Արժ. Տեր Պարթև Ալ. Քինյ. Գարագաշեանի հետ ներկայ գտնուեցաւ Համագային «Նուպար Խաչատուրեան» թատերախումբի ներկայացուցած «Մեր մեղքը» կատակերգութեան, հեղինակ՝ Արթուր Էտար, բեմադրիչ՝ Ղազար Կարապետեան:



Կիր., 16 Նոյեմբեր, Հայկական Քերմեսին տասնամեակն էր այս տարի, որ տեղի ունեցաւ Առաջնորդ Սրբազան հօր նախագահութեամբ Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ շրջափակին մէջ: Մանրամասնութիւնները կարդալ «Լուրեր Ծովերէն» բաժինին մէջ:

Բշ., 17 Նոյեմբեր, Վարդան Սրբազան նախագահեց Հայաստան Համահայկական Հիմնադրամի Սիտնիի մասնաճիւղի պարբերական ժողովին, որուն ընթացքին քննարկուեցան ապագայ արդիւնաբեր ծրագիրներ: Նաեւ քննարկուեցան 5 Դեկտեմբերին տեղի ունենալիք դրամահաւաք համերգի կազմակերպչական աշխատանքները:



Չորեքշաբթի, 19 Նոյեմբերի կէսօրէ առաջ Գերաշնորհ Տեր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան ընդունեց Նոր Զելանտայի մայրաքաղաք Ուելինկթընի Ասորի համայնքի ղեկավար Տիար Աշուր Եալտան: Սրբազան հայրը Պրն Եալտային ծանօթացած էր Սեպտեմբերին իր Ուելինկթըն այցին ընթացքին: Սրբազան հայրն ու իր հիւրը քննարկեցին Հայ-Ասորի համայնքներու եղբայրական յարաբերութիւնը եւ որոշեցին գործակցութիւնը զարգացնել յառաջիկային:



Նոյեմբեր 19-ի երեկոյեան, Սրբազան Հայրը Առաջնորդարանին մէջ ընդունեց Սիտնիի հայկական վարժարաններու ներկայացուցիչ ուսուցիչներու խումբը, որուն ընթացքին քննարկուեցաւ 2026 թուականին ուսուցչական համագումար կազմակերպելու ծրագիրը:

ՂԶ., 19 Նոյեմբեր – Ընկերակցութեամբ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի եւ Ս. Յարութին Եկեղեցոյ Ծխական Խորհուրդի ատենապետ Պրն Արա Գօփուշեանի, Սրբազան Հայրը Սիտնիի օղակայանին մէջ դիմաւորեց Հնդկ Մալանքարա Ուղղափառ Եկեղեցոյ Կաթողիկոս Նորին Սրբութիւն Պասիլիոս Մարթոմա Մաթեոս Գ.ը, որ հովուապետական այցելութեամբ Հնդկաստանէն այցելեց Աւստրալիա:



Ուրբ., 21 Նոյեմբեր, Եկեղեցոյ բարերարներ Տէր եւ Տիկին Աւօ եւ Ճէքի Թեւանեաններու հետ միասին Առաջնորդ Սրբազան հայրը ներկայ գտնուեցաւ Էքիւմենիք ճաշկերոյթի մը ի պատիւ Հնդկ Մալանքարա Եկեղեցոյ Կաթողիկոսին, նշելու համար առաջին տարեդարձը Մալանքարա Եկեղեցոյ Ասիոյ եւ Խաղաղականի Թեմի հիմնումին:



Կիրակի, 23 Նոյեմբերին, ի ներկայութեան բազմահարիւր հաւատացեալներու, Նորին Սրբութիւն Պասիլիոս Մարթոմա Մաթեոս Գ., Կաթողիկոս Հնդկ Մալանքարա Ուղղափառ Եկեղեցոյ, այցելեց Առաջնորդանիստ Սուրբ Յարութին Եկեղեցի: Վեհը ամպհովանիի ներքոյ, Հրաշափառի արարողութեամբ առաջնորդուեցաւ եկեղեցի, ուր արտասանուեցաւ բարի գալստեան խօսք: Նորին Սրբութիւնը արտասանեց օրհնութեան խօսքը:



Արարողութենէն ետք, Նորին Սրբութիւնը ճաշի հիւրը եղաւ Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հօր, մասնակցութեամբ եկեղեցական դասին, թեմական եւ ծխական մարմիններու ներկայացուցիչներու, ինչպէս նաեւ հրաւիրեալ ազգայիններու:

Հիւրասիրութիւնը ամբողջութեամբ պատրաստուեցաւ Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբին կողմէ:



Սրբազան հօր բարի գալստեան խօսքը թարգմանաբար կը ներկայացնենք ստորեւ.

Ձերդ Սրբութիւն,

Ձերդ Գերազանցութիւն, Արժանապատիւ Հոգեւոր հայրեր, Թեմական Խորհուրդի եւ Սուրբ Յարութիւն եկեղեցոյ Ծխական Խորհուրդի պատուարժան անդամներ, սիրելի բարերարներ եւ հաւատացեալներ, Խոր ուրախութեամբ եւ հոգևոր խոր երախտագիտութեամբ այսօր կ'ողջունենք Ձեզ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայ Առաքելական հաւատացեալներու հոգևոր տան՝ Սուրբ Յարութիւն առաջնորդանիստ եկեղեցոյ մէջ:

Ձերդ Սրբութեան առաջին հայրապետական այցը Սիտնիի եւ մեր համայնքին, թէն կարճատև, սակայն իսկական օրհնութիւն եւ պատմական պահ է մեր թեմին համար: Որպէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ, եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ին Հնդկաստանի եւ Հեռաւոր Արևելքի Հայրապետական Պատուիրակ, պատիւ կը զգամ, որ Ձերդ Սրբութիւնը բարեհաճօրէն քննարկեց իմ այս խոնարհ խնդրանքը եւ մեր համայնքին շնորհեցիք Ձեր ներկայութեան պարգևը: Մեր թեմի հոգևորականութեան, Թեմական Խորհուրդին, մեր ծխական առաջնորդներուն եւ բոլոր հաւատացեալներուն անունով սրտի ողջոյն կը յղեմ Ձերդ Սրբութեան եւ Ձեզի ուղեկցող պատուիրակութեան պատուարժան անդամներուն: Թող Ձեր մեզի հետ անցուցած ժամանակը լեցուի ուրախութեամբ, հաղորդակցութեամբ եւ Քրիստոսի խաղաղութեամբ: Պօղոս առաքեալը մեզ կը



Ձերդ Սրբութեան եւ Ձեզի ուղեկցող պատուիրակութեան պատուարժան անդամներուն: Թող Ձեր մեզի հետ անցուցած ժամանակը լեցուի ուրախութեամբ, հաղորդակցութեամբ եւ Քրիստոսի խաղաղութեամբ: Պօղոս առաքեալը մեզ կը

խրախուսէ. «Ընդունեցէք զիրար, ինչպէս Քրիստոս ընդունեց ձեզ՝ Աստուծոյ փառքին համար» (Հռովմ. 15:7): Եւ այսօր, քրիստոնէական սիրոյ նոյն ոգիով, մենք կ'ողջունենք Ձեզ՝ մեր Հայրը, առաքելական հաւատքով:

Ինչպէս բոլորս գիտենք, Մալանքարա Ուղղափառ Սուրիական Եկեղեցին հինգ Արևելեան Ուղղափառ քոյր եկեղեցիներէն մէկն է, որոնց հետ մենք կը կիսենք նոյն առաքելական արմատները, նոյն Քրիստոսակեդրոն դաւանանքը և նոյն անխախտ հաւատարմութիւնը հին հաւատքին: Մեր եկեղեցիներուն միջև կապը ոչ միայն աստուածաբանական է, այլև խորապէս եղբայրական: Ինչպէս գիտենք, Հայերը Հնդկաստանի մէջ յայտնուեցան և կառուցեցին իրենց տունը դարեր առաջ, միշտ վայելելով հնդիկ ժողովուրդի ջերմ եղբայրական վերաբերմունքը: Մինչ օրս, մեր երկու երկիրները, երկու եկեղեցիները և երկու ժողովուրդները կը պահպանեն այդ խոր բարեկամական կապերը: Այս եղբայրութեան գեղեցիկ վկայութիւնը ապացուցուած է մեր թեմին մէջ. Սիսնիի ներկայիս Քորեպիսկոպոսը և մեր սիրելի եղբայրը Քրիստոսով՝ Հայր Թովմաս Վարկիզը, իր քահանայական ձեռնադրութիւնը ստացած է Հայ Առաքելական Եկեղեցւոյ այս Սուրբ Սեդանին՝ զիս նախորդող Առաջնորդին օրհնութեամբ և թույլտուութեամբ: Այս սրբազան յիշատակին փայլքը մեր միասնութեան և սիրոյ խորհրդանիշ է:

Սուրբ Գիրքը մեզի կ'ուսուցանէ. «Նոր պատուիրան կու տամ ձեզի, որ մեկզմէկ սիրէք, ինչպէս ես սիրեցի ձեզ»: (Յովհ. 13:34): Այսօր, Ձերդ Սրբութեան ներկայութիւնը մեզ մօտ, Քրիստոսի կողմէ պատուիրուած սիրոյ կենդանի արտայայտութիւնն է, միատրելով մեր եկեղեցիները բարեկամութեան, հաւատքի և փոխադարձ յարգանքի մէջ: Մենք ջերմեռանդօրէն կ'աղօթենք Ձերդ Սրբութեան առողջութեան, զօրութեան, ինչպէս նաև երկար տարիներու պատրիարքական օրհնեալ առաջնորդութեան համար: Թող Աստուած Ձեզի շնորհէ Սողոմոնի նման իմաստութիւն, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի նման հաստատակամութիւն և սուրբ առաքեալներու նման հովուական սէր: «Եւ Աստուծոյ խաղաղութիւնը, որը կը գերազանցէ ամեն միտք, Քրիստոս Յիսուսով պահպանէ ձեր սրտերն ու մտքերը»: (Փիլիպ. 4:7)

Ձերդ Սրբութիւն, խոր յարգանքով, երախտագիտութեամբ, կրկին կ'ողջունենք Ձեզ և կ'աղօթենք Ձեր ծառայութեան, Մալանքարա Ուղղափառ Եկեղեցւոյ և աշխարհի մէջ մեր համատեղ առաքելական վկայութեան վերածաղկումին համար:

Թող մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը միշտ ըլլայ Ձեզ հետ և բոլոր անոնց, որոնք կանգնած են Ձեր կողքին: Եւ այս օրհնեալ պահին ես կը հրաւիրեմ Ձերդ Սրբութիւնը փոխանցելու Ձեր ուղերձը և օրհնելու մեր հաւատացեալները:

Երկուշաբթի 24 Նոյեմբեր - Առաջնորդ Սրբազան հայրը, ընկերակցութեամբ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի եւ Դոկտ Ստեփան Գրգեաշարեանի, մեկնեցաւ Քանպերա եւ մասնակցեցաւ Խորհրդարանական միջ-կրօնական նախաճաշին, կազմակերպուած Աւստրալական Կաթոլիկ Համալսարանի





կողմէ: Նոյն օրը Սրբազանն ու ընկերակիցները հանդիպում ունեցան Լիթւանիայի եւ Ֆրանսայի դեսպաններուն հետ:

Լիթւանիոյ դեսպան Պրն Տարիուս Տեգուտիս եւ Սրբազան հայրը ունեցան սիրալիր խօսակցութիւն. Սրբազան Հայրը քաղցրութեամբ յիշեց իր ծառայութիւնը Պալթեան երկիրներու Հայոց Թեմէն ներս, ինչպէս նաեւ իր ունեցած ջերմ ու բարեկամական փոխադարձութիւնները Լիթւանիայի պետական եւ եկեղեցական ներկայացուցիչներուն հետ:

Ջերմ եւ կառուցողական զրոյցէն վերջ, Առաջնորդ Սրբազանը իր գրառումը կատարեց հիւրերուն յատուկ մատենին մէջ:

Ֆրանսայի փոխդեսպան Պրն Կիյոմ Տապուի սիրալիր ընդունեց Սրբազան հայրն ու ընկերակիցները: Կողմերը անդրադարձան երկու պետութիւններու եւ ժողովուրդներու պատմական կապերուն, խոր մշակութային առնչութիւններուն, ինչպէս նաեւ երկու համայնքներու համագործակցութեան հաւանական ուղիներուն:



Երեքշաբթի 25 Նոյեմբեր - Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան, Արժ. Տէր Աւետիս Քինյ. Համբարձումեանի եւ Դոկտոր Ստեփան Գրգեաշարեանի ընկերակցութեամբ, Կիպրոսի Աւստրալիոյ Քանաքայի Դեսպանատան մէջ այցելեց Աւստրալիոյ մէջ Կիպրոսի Բարձր Յանձնակատար Պրն Անթոնիս Մամուրիսին:

Հանդիպման ընթացքին կողմերը անդրադարձան երկու պետութիւններու եւ ժողովուրդներու պատմական կապերուն, խոր մշակութային առնչութիւններուն, ինչպէս նաեւ երկու համայնքներու համագործակցութեան հաւանական ուղիներուն:



Երեքշաբթի 25 Նոյեմբեր – Քանաքեա այցի ընթացքին Առաջնորդը այցելեց Սինկափուրի դեսպանատան առաջին քարտուղար Պրն Պրանտըն Չունկին, ընկերակցութեամբ Արժ. Տէր Աւետիս Քինյ. Համբարձումեանի եւ Դոկտոր Ստեփան Գրգեաշարեանի: Սինկափուրի Բարձր Յանձնակատարութեան Առաջին Քարտուղարը կը ներկայացնէր նաեւ Բարձր Յանձնակատարը:

Հանդիպման ընթացքին կողմերը անդրադարձան երկու ժողովուրդներու պատմական կապերուն, խոր մշակութային եւ տնտեսական առնչութիւններուն, ինչպէս նաեւ մեր պատմական եկեղեցւոյ ներկայութեան, որուն 190-ամեայ յոբելեանը պիտի նշուի 2026-ին:

Չորեքշաբթի 26 Նոյեմբեր – Առաջնորդարանի առցանց 46րդ դասախոսությունը տեղի ունեցավ նախագահությամբ Գերաշնորհ Սրբազան Հօր: Դասախոսն էր Փրոֆեսոր Ալետիա Հմայակի

Յարությունեան, Նիւթ՝ «Հայաստանի եւ Հայերու Մասին Տեղեկությունները Հին Շրջանի Օտար Աղբիւրներու Մէջ»: Հանդիսավար Նշան Պասմաճեան իր բացման խօսքին մէջ յայտնեց որ այս նիւթը աննախընթաց էր մեզի համար **հակառակ այն իրողութեան որ պատմութեան հետ առնչուած նիւթեր արծարծուած են այս հարթակէն, բայց նմանը՝ ոչ:**

Փրոֆեսորը տուաւ բազում փաստեր Հայ ժողովուրդի իր պատմական հողերուն վրայ ապրած ըլլալուն մասին աւելի քան 6000 տարի: Այնքան գիտելիք փոխանցեց իր ակնդիրներուն, որ Փարոսի խմբագրութիւնը կը

յանձնարարէ ընթերցողներուն ակնդրել վարի եութիւպեան յղումը եւ ըմբռնել պատմական գիտելիքները: <https://www.youtube.com/watch?v=9milwVQb4OI>

Ստորեւ՝ Փրոֆեսորին հակիրճ կենսագրականը.

Փրոֆեսորը Հայոց Պատմութեան մասնագետ դասախօս է: Հինգ տարի ուսանելէ ետք, 1983-ին գերազանցութեամբ կ'աւարտէ Աբովեանի անուան Մանկավարժական համալսարանի պատմա-աշխարհագրական կաճառը:

1980-ին կը մասնակցի Ղափանի շրջանին մէջ հնագիտական պեղումներու:

1979-1982 կ'ուսանի Երեւանի Պետական Համալսարան եւ գերազանցութեամբ կը վկայուի որպէս Անգլերէն լեզուի պատմաբան-թարգմանիչ:

1986-ին գերազանցութեամբ կ'աւարտէ Աբովեանի անուան Համալսարանի մագիստրոսական բաժինը, իսկ

1989-ին կը ստանայ իր դոկտորական վկայականը *պաշտպանելով Առաջին համաշխարհային պատերազմը և հայ գաղթականութիւնը 1914-1917:*

2020-էն ի վեր Աբովեանի անուան Մանկավարժական համալսարանի Հայոց Պատմութեան ամբիոնի փրոֆեսոր է:

1990-2000 թուական վարած է Դաւիթ Անյաղթ Համալսարանի գիտական աշխատանքի բաժինին փոխ տնօրէնի պաշտօնը:



1993-էն մինչեւ օրս կ'աշխատի Էջմիածնի Գեորգեան հոգևոր ճեմարանի մէջ, ուր կը դասաւանդէ Հայաստանի պատմական աշխարհագրութիւն, Հայոց պատմութիւն, Հայ մշակոյթի պատմութիւն, Հայկական քաղաքակրթութիւն, Հայ գաղթավայրերու պատմութիւն և Հայ եկեղեցւոյ պատմութիւն:

Մասնակցած է հանրապետական և միջազգային բազմաթիւ գիտաժողովներու:

Հեղինակ է հայերէն, ռուսերէն, անգլերէն, ֆրանսերէն, պարսկերէն, հունգարերէն, գերմաներէն լեզուներով տպագրուած շուրջ 210 գիտական աշխատութիւններու, որոնց կարգին՝ մենագրութիւններ, մատենագիտական ժողովածուներ, թարգմանութիւններ, եւայլն:

Փրոֆեսորը Հանրային հեռուստաընկերութեան (Հ 1) Հայեր հաղորդաշարի հիմնադիր-համահեղինակը և պատմաբան-խորհրդատուն եղած է: Ան անդամ է Մանկավարժականի գիտական խորհուրդին, ինչպէս նաեւ Կրօնի Տեսութիւն եւ Պատմութիւն մասնագիտական խորհուրդին:

Կը տիրապետէ Հայերէնի, Ռուսերէնի եւ Անգլերէնի:





Չորեքշաբթի 26 Նոյեմբեր - Գերաշնորհ Տեր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը նախագահեց Հայաստան Համահայկական Հիմնադրամի Մելպուրնի մասնաճիւղի առցանց ժողովին: Քննարկուեցան համագործակցութեան հնարաւոր ուղիներ, եւ յառաջիկայի միասնական ծրագիրներուն առնչուած հարցեր:

Հինգշաբթի, Նոյեմբեր 27-ին, Թեմիս Առաջնորդ Գերաշնորհ Տեր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանը մասնակցեցաւ ՀՕՄ-ի Արագ մասնաճիւղի վարչութեան կազմակերպած Սուրբ Ծննդեան տօնակատարութեան եւ իր հոգևոր ու քաջալերական պատգամը փոխանցեց բոլոր ներկաներուն:

Հինգշաբթի, 27 Նոյեմբեր - Գերաշնորհ Տեր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան, Առաջնորդարանին մէջ, ընդունեց Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութեան անդամները: Սրբազանը մօտէն հետաքրքրուեցաւ Նոր Սերունդի աշխատանքներուն եւ տեղեկացաւ անոր ապագայ ծրագիրներուն: Սրբազանը իր զօրակցութիւնը յայտնեց Նոր Սերունդի մշակութային գործունէութեան եւ մաղթեց յաջողութիւն անոր հայանպաստ աշխատանքներուն:



Հինգշաբթի, 27 Նոյեմբեր, Գերաշնորհ Տեր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը, Առաջնորդարանին մէջ, նախագահեց Հայաստան Համահայկական Հիմնադրամի Սիտնիի մասնաճիւղի վարչութեան հերթական ժողովին: Ժողովը զբաղեցաւ Համահայկական Հիմնադրամի տարեկան ձեռնարկ երգահանդէս դրամահաւաքի կազմակերպչական աշխատանքով:

Ուրբաթ, 28 Նոյեմբերի երեկոյեան, Գերաշնորհ Տեր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան, Թեմական Խորհուրդին հետ միասին, Առաջնորդարանին մէջ հիւրընկալեց անցեալի եւ ապագայի Առաջնորդարանի Բարեկամները, անոնց ի պատիւ տրուող ամենամեայ Քոքթէյլին:

Ներկայ էին նաև Արժանապատիւ Տեր Պարթև Աւագ Քահանայ Գարագաշեանը, Տեր Աւետիս Քահանայ Համբարձումեանը և Տեր Աշոտ Քահանայ Աբրահամեանը: Բոլորին համար առիթ էր լսելու մեր նոր Առաջնորդին տեսլականը, ծրագրերը և բացատրութիւնը մեր թեմի առաքելութեան մասին:

Ներկայ էին նաև Արժանապատիւ Տեր Պարթև Աւագ Քահանայ Գարագաշեանը, Տեր Աւետիս Քահանայ Համբարձումեանը և Տեր Աշոտ Քահանայ Աբրահամեանը: Բոլորին համար առիթ էր լսելու մեր նոր Առաջնորդին տեսլականը, ծրագրերը և բացատրութիւնը մեր թեմի առաքելութեան մասին:



Երեկոն սկսաւ Սրբազան հօր աղօթքով, որմէ ետք ներկաները վայելեցին Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբին գեղեցիկ հիւրընկալութիւնը եւ ստեղծուած ջերմ և բարեկամական մթնոլորտը:

Հանդիսավարն էր Պօղոս սարկաւազ Քելէշեանը, որ իր իւրօրինակ ոճով ողջունեց հիւրերը և ներկայացուց Երեկոյի ծրագիրը: Ան նշեց թէ ինչպէս Հայ ինքնութեան պահպանման մարտահրաւերները, մասնաւորապէս Սփիւռքի մէջ, կրնան նաև մեծ փոփոխութիւններու պատճառ դառնալ, եթէ իւրաքանչիւրս չանդրադառնանք մեր խաղալիք դերին, որքան ալ փոքր ըլլայ ան: Դարերու ընթացքին այդ փոփոխութիւններուն շարժիչ ուժը եղած է Հայ մարդը, որ կանգնած է գաղափարին, արժէքին և ազգային հաստատութիւններուն կողքին, դառնալով այդ հաստատութիւններուն աջակից եւ բարեկամ: Պօղոս Սարկաւազ, անդրադառնալով Առաջնորդարանի Բարեկամներուն արժէքին, ըսաւ, որ անոնք ոչ միայն նիւթապէս աջակցողներ են, այլ նաև խորհրդատուներ, Առաջնորդարանի զարգացման հետեւողներ եւ անոր առաքելութեան ջատագովներ: Այնուհետև, ան հրաւիրեց Թեմականի ատենապետ Պարոն Սարգիս Տէր Պետրոսեանը ըսելու իր սրտի խօսքը:

Պարոն Տէր Պետրոսեան խօսեցաւ յանուն Թեմական Խորհուրդին, Նոր Առաջնորդի ընտրութեան գործընթացին մասին և խոր երախտագիտութիւն յայտնեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Գերաշնորհ Տէր Վարդան եպիսկոպոս Նաւասարդեանը մեր թեմին յաջորդ Առաջնորդը նշանակելուն համար: Ան գնահատանք յայտնեց այն կենսունակութեան և նոր ներուժին համար, որ Սրբազանը բերած է մեր թեմին մէջ այս մի քանի ամիսներուն ընթացքին, մեր համայնքին հետ կրկին ծանօթանալու, ինչպէս նաև մեր եկեղեցիներուն հետ և աւելի լայն էքիւմենիք շարժման շրջանակներուն մէջ յարաբերութիւններ հաստատման մէջ:



Երեկոյի ծրագիրը իր մէջ նաեւ կ'ընդգրկէր Տէր Աւետիս Համբարձումեանի կողմէ թեմի վերջին 12 ամիսներու գործունէութեան հաշուտութեան ընթերցումը, թեմի նոր լոկոյի առաջին անգամ բացայայտումը, ինչպէս նաև թեմի մասին ակնարկ՝ Պօղոս սարկաւազին կողմէ ներկայացումը փառլոր փոյնի միջոցաւ, որը լրացուցիչ ուրուագծեց առաքելութեան, Առաջնորդի տեսլականին և գործողութիւններու ծրագրին մանրամասները: Այնուհետև ան



հրաւիրեց հիւրերը կիսուելու իրենց մտքերը եւ կատարելու մեկնաբանութիւններ և առաջարկութիւններ չորս գործողութիւններու վերաբերեալ:

Երեկոն ամբողջացաւ Կոմիտասի գեղեցիկ հայկական գործիքային ստեղծագործութիւններու կատարմամբ, զորս իրականացուցին տիկին Քէյթի Բրուտեան(սրինգ) և Պօղոս Սարկաւազ՝ (դաշնամուր եւ երգեհոն), նուագելով «Ալագեազ», «Քելէ Քելէ» և «Չինար ես»ը:

Ձեռնարկին ընթացքին խօսք առաւ Սրբազան Հայրը: Ան ջերմօրէն ողջունեց ներկաները, շնորհակալութիւն յայտնելով ներկայ Առաջնորդարանի Բարեկամներուն: Խօսքը ուղղելով բոլոր անոնց, որոնք կը հաւատան թեմի եւ , մեր համայնքին մէջ Հայ Եկեղեցւոյ կարևոր առաքելութեան, ան գանոնք խրախուսեց շարունակել իրենց գործընկերութիւնը՝ իրենց բարոյական և ֆինանսական աջակցութեամբ: Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց Թեմական Խորհուրդին և մասնաւորապէս



ատենապետին և փոխատենապետին՝ Առաջնորդի ընտրութեան մէջ իրեն ցուցաբերած աջակցութեան և վստահութեան համար: Ան աւելի մանրամասն խօսեցաւ Յովիսէն Աւստրալիա ժամանելէն ի վեր իր տարած աշխատանքին և յառաջիկայ ծրագրերուն մասին՝ խոստանալով պահպանել իրեն վստահուած ժառանգութիւնը, որը արդէն սկսած է գործնականացնել:

Սրբազան հայրը շնորհակալութիւն յայտնեց և բարձր գնահատեց Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբը, որը մշտապէս եղած է իր կողքին եւ գոհացում տուած իր բոլոր խնդրանքներուն, զանոնք հմտօրէն իրականութեան վերածելով:

Երեկոն աւարտեցաւ բարձր տրամադրութեամբ. բոլորը տուն վերադարձան նորոգուած ոգևորութեամբ և մեր եկեղեցւոյ և համայնքին պայծառ ապագայի յոյսով:



Ուրբաթ 28 Նոյեմբեր – Գերաշնորհ Սրբազան Հայրը, ընդառաջելով Հայ Դատի Յանձնախումբի հրաւերին, Սոֆիթլ Պանդոկի հանդիսասրահին մէջ ներկայ եղաւ Աւստրալիոյ Հայ Դատի Յանձնախումբի կազմակերպած Կալա ճաշկերոյթին, որուն ընթացքին նշուեցաւ նաեւ սոյն Յանձնախումբի հիմնադրման յիսուներորդ տարեդարձը:

Նոյեմբեր 30-ին, Աւստրալիոյ և Նոր Զելանտայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան, Թեմական Խորհուրդի ատենապետ Տիար Սարգիս Տէր Պետրոսեանի և Թեմական Խորհուրդի Փոխատենապետ Դոկտ Ստեփան Գրգեշաւարեանի հետ, հովուական առաքելութեամբ մեկնեցաւ Մելպուրն մասնակցելու Անքիլկան Արքեպիստոպոսի գահակալութեան արարողութեան:



Կիր., 30 Նոյեմբեր, Թեմիս նախկին Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեան, որ անձնական այցելութեամբ Սիւնի կը գտնուի, Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ մէջ մասնակցեցաւ Սուրբ եւ Անմահ Պատարագին եւ քարոզեց հաւատացեալներուն:

Սրբազան հօր քարոզը կը վերաբերէր Սուրբ Թադէոս եւ Բարդուղիմէոսին, որոնք Քրիստոսի լոյսը բերին ի Հայաստան: Ան նաեւ հակիրճ տեղեկութիւն տուաւ Հայաստանի անցուղարձերուն եւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ դիմագրաւած մարտահրաւերներուն, յատկապէս Եկեղեցի պետութիւն հակամարտութեան մասին:



Լուրեր Ծովխերէն

ՉԱՅՈՒՈՒՏ – ՍԻՏՆԻ Սուրբ Յարութիւն Եկեղեցի

ԱՄԵՆԱՄՍԵԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՍԲՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՋ

Սիտնիի Սբ. Յարութիւն Հայ Առաքելական առաջնորդանիստ
Եկեղեցւոյ Երիտասարդական Միութեան (ACYA) նախաձեռնած

Ամենամսեայ Երիտասարդական Սբ Պատարագներու կողքին, երբեմն կը կատարուին նաեւ երեկոյեան ժամերգութիւններ: Սբ Պատարագը երիտասարդներուն աւելի հասկնալի դարձնելու համար օրուան ճաշու ընթերցանութիւնը, զոջումը եւ քարոզը կը կատարուին անգլերէն լեզուով եւ թարգմանութեամբ, որ հնարաւորութիւն կու տայ Հայ երիտասարդներուն դիւրութեամբ մասնակցելու եկեղեցական կեանքին եւ համայնքի միւս երիտասարդներուն հետ կապ հաստատելու:

Նոյեմբեր 1-ին, Շաբաթ երեկոյեան, ներկայութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Վարդան Եպս. Նաւասարդեանի, եւ մասնակցութեամբ քահանայ հայրերու, սարկաւազներու եւ երիտասարդներու, կատարուեցաւ երեկոյեան կիրակամուտի ժամերգութիւն: Օրուան պատգամը անգլերէն լեզուով քարոզեց Արժ. Տ. Աւետիս Քհնյ. Համբարձումեանը, քարոզի նիւթը վախի մասին էր՝ մասնաւորաբար Յովհաննու Աւետարանի 6:20 հատուածը. «Ես եմ, մի վախնաք»: Այնուհետեւ, երիտասարդները ունեցան ընկերային հանդիպում Էտկարեան սրահին մէջ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՅ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏՈՒՆ

Նոյեմբեր 12-ին, Չորեքշաբթի, Արժ. Տ. Պարթեւ Աւագ քին. Գարագաշեանը կատարեց հերթական ամենամսեայ այցելութիւն Ալեքսանդր Հայ Հանգստեան Տուն: Բնակիչներուն համար կատարուեցաւ ժամերգութիւն, բժշկութեան աղօթք եւ Սուրբ Հաղորդութիւն տրուեցաւ: Իւրաքանչիւր ամսուան երկրորդ Չորեքշաբթի օրը Ս. Յարութիւն Եկեղեցւոյ քահանայ հայրերը այցելութիւն կու տան Ալեքսանդր Հայ Հանգստեան Տուն:



ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՄՆԵՐՈՐԴ ՔԵՐՄԵՍԸ

Տեղի ունեցաւ **Կիրակի, 16 Նոյեմբերին**, Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ շրջափակին մէջ:

Համայնքային հաւաքոյթի գաղափարով սկսած միջոցառումը տաս տարիներու ընթացքին ստացաւ լիարժեք փառատօնի հանգամանք եւ ընդունուեցաւ անխտիր բոլորին կողմէ:

Հիմք ունենալով հայկական մշակոյթի եւ համայնքին զանազան կրթա-մշակութային հաստատութեանց կենսունակութիւնը, անոնք ըլլան շաբաթօրեայ եւ ամենօրեայ դպրոցներ, պարախումբեր, երգչախումբեր, Քերմէսը տարուէ տարի կը բացայայտէ մեր համայնքային ոգիին դրական կողմերը:

Պաշտօնական արարողութիւնը սկսաւ Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանի բացման խօսքով եւ աղօթքով: Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցի աշակերտները առաջնորդեցին ներկաները միասնաբար կատարելու Տէրունական աղօթքը:

Իրենց սրտի խօսքով հանդէս եկան Հոգեւոր Հովիւ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանը, եւ Ծխական Խորհուրդի ատենապետ Պրն Արա Գօփուշեանը, որոնք շնորհակալութիւն



յայտնեցին և գնահատեցին Քերմեսեի կազմակերպիչ յանձնախումբերու նախկին և ներկայ անդամները, և մեկ վայրկեան յոտնկայս լուրթեամբ յարգեցին յիշատակը մեզմէ յաւերժ հեռացած անդամներուն:



Այս տարուան Քերմեսեի թեման էր՝ «Մեր երախտագիտութիւնն ու գնահատանքը յայտնենք Մեր համայնքին», ցոյց տալու համար յարգանքն ու երախտագիտութիւնը մեր համայնքին վերջին 10 տարիներու ընթացքին ցուցաբերած աջակցութեան համար, յոյս ունենալով, որ մենք բոլորս կը մնանք զօրաւոր, միասնական և անքակտելի կապով կապուած մեր ժառանգութեան և Մայր Եկեղեցւոյ:

Իրենց խօսքերը արտասանեցին նաեւ նահանգային երեսփոխան Թիմ Ճէյմս եւ Ուիլուպիի քաղաքապետուհի Թանիա Թէյլըր: Ապա սկսաւ գեղարուեստական յայտագրի իրագործումը երգերով, ասմունքներով և պարերով: Համեղ ուտեստները, խաղերը և վիճակախաղերը ամբողջացուցին օրուան փառատօնի գեղեցիկ մթնոլորտը:



Մեկլուրն Սուրբ Աստուածածին Եկեղեցի

Նոյեմբեր 15-ին Տեղի ունեցաւ Մեկլուրնի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ Տարեկան պազարը Տիկնանց միութեան կազմակերպութեամբ: Տիկնանց միութեան և բազմաթիւ կամաւորներու հոգատար աշխատասիրութեամբ ձեռնարկը պսակուեցաւ յաջողութեամբ: Նեկայ էին քաղաքական և տեղական կառավարման ներկայացուցիչներ:



Gabriel Ng MP - Federal Member for Menzies
 John Pesutto MP - State Member for Hawthorn
 Councillor Sophie Torney - Mayor - City of Boroondara
 Councillor Kirsten Langford - Newly elected Mayor - Whitehorse City Council
 Councillor Chris Pattas - City of Boroondarra
 Councillor Andrew Davenport - Whitehorse City Council

Ձեռնարկը ունի ճոխ եւ գեղեցիկ յայտագիր, որուն մասնակցեցան Ակիւնեան դպրոցի սաները՝ երգեցողութեամբ, և Ազատ Ղարիպեան հայկական պարախումբը ազգագրական պարերով:



Ուէնթուրըթվիլ - ՄԻՏՆԻ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցի

Աւստրալիոյ և Նոր Զելանտայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանի տնօրինութեամբ, **1 Նոյեմբեր 2025**-էն սկսեալ, ցնոր տնօրինութիւն, Արժանապատիւ Տէր Աշոտ Քահանայ Աբրահամեան նշանակուած է այցելու Հոգեւոր Հովիւ Սիտնիի Ուէնթուրըթվիլի Սուրբ Երրորդութիւն Եկեղեցւոյ:

7 Նոյեմբերին, Տէր Աշոտ Քահանայ Աբրահամեանը, որպէս Սուրբ Երրորդութիւն Եկեղեցւոյ նորանշանակ հովիւ, հանդիպեցաւ եկեղեցւոյ մեծ ընտանիքին հետ եւ ծանօթացաւ անոր անդամներուն: Հանդիպումը սկսաւ եկեղեցւոյ մէջ, ուր ներկաները մասնակցեցան երեկոյեան ժամերգութեան, ապա բարձրացան սրահ՝ հանդիպումը շարունակելու ընթրիքի սեղանին շուրջ: Տեղի ունեցան հետաքրքրական քննարկումներ եւ ներկայացուցեցան տարբեր առաջարկներ՝ եկեղեցական համայնքին կեանքը աւելի զարգացնելու համար:





Նոյեմբեր 9-ին, թեմիս Առաջնորդ Գերշ. Վարդան եպս Նաւասարդեան Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ հանդիսապետեց Սուրբ եւ Անմահ Պատարագին եւ յաւուր պատշաճի քարոզեց: Այնուհետեւ յայտարարեց Տէր Աշոտ Քահանայի նշանակումը: Պատարագէն վերջ, եկեղեցւոյ սրահին մէջ, ջերմ ընտանեկան մթնոլորտի մէջ, կազմակերպուեցաւ հիւրասիրութիւն:

Նոյեմբեր 21-ին, Տէր Աշոտ կատարեց երեկոյեան ժամերգութիւն Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, ապա ունեցաւ հետաքրքիր եւ ոգեշնչող հանդիպում երիտասարդներուն հետ: Իր խօսքին ընթացքին ան բացատրեց եկեղեցական բարեպաշտական սովորութիւններու խորիմաստութիւնը, զանազանելով զանոնք սնոտիապաշտութենէն ու կռապաշտութենէն, ու հրաւիրեց երիտասարդները աւելի գիտակից եւ սրտաբաց մասնակցութեան եկեղեցւոյ կեանքին:

Նոյեմբեր 29-ին Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ երիտասարդները, իրենց հոգեւոր հովիւին առաջնորդութեամբ, ուխտաւորաբար այցելեցին դպտի Սուրբ Շէնուտա Հայրապետի անունը կրող վանքը: Վանա-կաններուն հետ միասին մասնակցեցան Սուրբ եւ Անմահ Պատարագին: Այնուհետեւ, վանականներէն մէկուն ուղեկցութեամբ, շրջեցան վանքի տարածքը եւ ծանօթացան վանականներու նիստուկացին:



ՕՔԼԱՆՏ – ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱ

Սորբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի



Կիրակի, 16 Նոյեմբեր – Կազմակերպութեամբ Օքլանտի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Տիկնանց Յանձնախումբին, տեղի ունեցաւ ուտեստեղէններու վաճառք, որուն եկամուտը յատկացուեցաւ Եկեղեցւոյ այլեւայլ ծախսերուն: Ժրաջան տիկիները պատրաստած էին համադամ կերակուրներ, որոնք շատ արագ վաճառուեցան: Մանաւանդ՝ հայկական Պաստուրման եւ Սուճուխը: Ծօշափելի թիւով ասորի համայնքէն անդամներ մասնակցեցան եւ սատար հանդիսացան վաճառքի գործընթացին:

Նոր Զելանտայի Հայկական Միութեան վարչական անդամներ, զանազան բնագա-

ւառներու մէջ օգնեցին ձեռնարկի յաջողութեան:

Նոր Զելանտայի Հայկական Միութեան վարչական անդամներ, զանազան բնագաւառներու մէջ օգնեցին ձեռնարկի յաջողութեան:



պատասխանատուութեան եւ յուզիչ վայրկեաններուն, աղօթքներուն, եկեղեցւոյ խորհուրդին, Սուրբ Հոգւոյ ընծայած ներշնչումին մասին: Ան պատասխանեց բոլոր հարցումներուն, գոհացում պատճառելով հաւաքուած աւելի քան 500 անձերու:

Աւարտին, Նշան Պասմաճեան շնորհաւորեց Քարտինալը իր անկեղծ պատասխաններուն եւ վերլուծումներուն համար, անոր փոխանցեց Վարդան Արքեպիսկոպոսի ողջոյններն ու յարգանքը: Քարտինալ Տու, ընդառաջ երթալով Նշան Սարկաւազի առաջարկին, խնդրեց որ զինք տեղեակ պահէ Վարդան Սրբազանի յաջորդ Ուէլինկլըն այցին մասին, որպէսզի կարենան հոն հանդիպիլ:



Armenia-ի եւ հայկական պար սորված է վեց ամիս աշակերտելով անմահն Գագիկ Գինոսեանին: Ան հայկական պար կը սորվեցնէ երկշաբաթեայ դրութեամբ Օքլանտի Հայ պարմանուիիներուն: Գնահատելի մշակութային աշխատանք:

Ուրբաթ, 21 Նոյեմբեր – Կազմակերպութեամբ Օքլանտի Կաթոլիկ Առաջնորդարանին, տեղի ունեցաւ դասա-խօսութիւն-հարցազրոյց, որուն խորագիրն էր «Գիշեր մը Քոնքլավի մէջ»: Քոնքլավը այն գաղտնի ժողովն է որ կը գումարուի Վատիկանի մէջ ընտրելու համար նոր Պապ մը վախճանեալ Պապը փոխարինող: Քարտինալին հետ հարցազրոյցը վարեց Նոր Զելանտայի մէջ շատ ծանօթ լրագրող-հաղորդավար Թիմ Ուիլսընը: Դասախօսն էր Նոր Զելանտայի Քարտինալ Ճոն Տու, որ վեց ամիս առաջ, Մայիսին, 133 Քարտինալներով մասնակցած էր Լեօ 14րդ Պապի ընտրութեան:

Ձեռնարկին հրաւիրուած էր նաեւ Բարեշնորհ Նշան Սարկաւազ Պասմաճեան:

Քարտինալը խորհրդածեց իր փորձառութեան մասին,



Կիրակի, 23 Նոյեմբերին – Նոր Զելանտայի Հայկական Միութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ դաշտագնացութիւն Լոնկ Պէյի հանրային պարտէզ: Աւելի քան 25 հայորդիներ հաւաքուած էին տարեվերջի բարեմաղթանքները կատարելու իրարու: Յատկանշական էին այն հայկական պարերը, որոնք կատարուեցան մեր երիտասարդուիիներուն կողմէ ղեկավարութեամբ Տիկին Աշլի Վարդանեան-Տէյվիտի: Աշլին պարսկահայ ծնողքի զաւակ է, ամուսնացած է Նոր Զելանտացիի հետ, մասնակցած է Birthright



Հայ Համայնքի Բարեկեցության Կեդրոն

Հայ Համայնքի Բարեկեցության Կեդրոնը (ՀՀԲԿ) ուրախ է յայտարարելու, որ Առողջապահության Նախարարությունը պաշտոնապես վաերացուցած է Վիքթորիա նահանգի Բարեկեցության Կեդրոնի միաձուլումը ՀՀԲԿ-ի հետ:

Այս կարևոր իրողությունը արդիւնք է ՀՀԲԿի եւ նախարարության միջեւ տեղի ունեցած համագործակցական զանազան հանդիպումներու: Միասնական քննարկումներուն որպէս արդիւնք Վիքթորիայի մասնաճիւղը **1 Նոյեմբերէն** սկսեալ պաշտոնապէս դարձաւ ՀՀԲԿ-ի մաս: Այս միաձուլումը կ'ամրապնդէ Վիքթորիայի Հայ համայնքի անդամներուն մատուցուող համայնքային աջակցութեան ծառայութիւններու շարունակականութիւնը, որակը եւ համակարգումը:



Հեզասահ փոխանցում ապահովելու համար, ՀՀԲԿի տնօրէն Տիկին Զեփիւտ Մուրատեան, **Նոյեմբեր 21-ին**, մեկնեցաւ Մելպուրն, ուր հանդիպեցաւ խումբի ղեկավարութեան հետ, որուն ընթացքին քննարկուեցան ապագայ ծրագրերը, կատարուեցան ծառայութիւններու մատուցման դասաւորումները եւ թիւի աճի պարագային ձեռք առնուելիք միջոցները:

Համայնքի բարեկեցութեան նուիրուածութիւնը մատնացոյց ընելով, Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան, Դեկտեմբեր 1-ին, մասնակցեցաւ Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ խմբական պտոյտին, ուր անձամբ տուաւ իր խրախուսանքն ու օրհնութիւնը մասնակիցներուն եւ



կամաւոր աշխատողներուն:

ՀՀԲԿն անհամբեր կը սպասէ Վիքթորիայի մէջ իր ներկայութեան ամրապնդման, յօգուտ կարիքաւորներուն կարեկցութիւն եւ համայնքային աջակցութիւն ցուցաբերման, որով կը շարունակուի իր առաքելութիւնը:

22 Նոյեմբերին, ACWC-ն կազմակերպեց իր առաջին 7.2 քմ. քայլարշավը: Միջոցառումը մեծ յաջողություն ունեցավ: Համախմբուեցան տարբեր տարիքի անձինք ընդհանուր նպատակին եւ իմաստալից գործին շուրջ: Մասնակիցները քալեցին որոշակի հեռավորություն, որպես աջակցություն համայնքի բարեկեցության, առողջության եւ համերաշխության: Քայլարշավը անելին էր, քան պարզապես մարմնամարզային գործունեություն. ան միասնության, դիմադրողականության եւ խմբային ոգիին պանծացումն էր: Մասնակիցները վայելեցին քալելուն առողջապահության բերած նպաստները::

Այս պտոյտը ծառայեց ՀՀԲԿի նպատակին, որն է ստեղծել հոգատար եւ ուժեղ համայնք:

Յատուկ շնորհակալություն Երեցկին Յասմիկին, յաջող եւ կազմակերպուած միջոցառում մը իրականացնելուն համար:

Ջեֆիլա Մուրատեան



Get Well Wishes

His Grace Bishop Vardan Navasardyan with the Diocesan Council and the Paros editorial team extend their get well wishes to Friend of the Diocese Mrs Ilda Zorlu who is recuperating at home after surgery earlier this month.

We pray to Almighty God for Mrs Ilda's improved health and good spirits.

Բարի Ապաքինում

Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանը, Թեմական Խորհուրդը եւ Փարոսի խմբագրական կազմը բարի սպաքինում կը մաղթեն Առաջնորդարանի Բարեկամ Տիկին Իլտա Զօրլուին, որ վիրահատութեան ենթարկուեցաւ ամսոյս սկիզբը: Աղօթք կը բարձրացնենք առ Աստուած որ Տիկին Իլտային շնորհէ շտապ սպաքինում եւ առողջ օրեր:



ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԷՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ՄԷՋ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕԾՄԱՆ և ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ 26-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

Նոյեմբեր 2-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեզին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութեան 26-րդ տարեդարձին առիթով Սուրբ Պատարագի աւարտին կատարուեցաւ Հայրապետական մաղթանք: Ընկալեալ կարգի համաձայն հաւատացեալներուն երկրպագութեան համար դուրս էր բերուած նաև Սկևռայի սրբոց մատունքներու պահարանը:

Սրբազան արարողութեան ներկայ էին Հայ Եկեղեցոյ թեմակալ առաջնորդներ, Գերագոյն հոգևոր խորհուրդի անդամներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ և ուխտաւոր հայորդիներ:



Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Նաճարեան:

Պատարագիչ Սրբազանը իր քարոզին մէջ շնորհաւորեց Հայոց Հովուապետը և անդրադարձաւ Վեհափառ Հայրապետի հոգևոր, մշակութային, կրթական ու եկեղեցաշէն գործունեութեան և մեծաթիւ ձեռքբերումներուն, մաղթելով անսասան հովուապետութիւն՝ ի պայծառութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ, ի մխիթարութիւն բարեպաշտ ժողովուրդին և ի զօրացումն Հայրենիքի:

Այնուհետև, Իջման Սուրբ Սեղանին առջև կատարուեցաւ Հայրապետական մաղթանք՝ հանդիսապետութեամբ Մայր Աթոռի Արտաքին յարաբերութիւններու և արարողակարգի բաժնի տնօրէն Գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Յովհաննիսեանի:

Ներկաները աղօթք բարձրացուցին առ Աստուած՝ Ամենայն Հայոց Հայրապետութեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանութեան ու պայծառութեան, ինչպէս նաև Նորին Սրբութեան քաջառողջութեան, կենաց արևշատութեան և բազմամեայ գահակալութեան համար:

ԱՒԱՐՏԵՑԱԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎՐ

Նոյեմբեր 4-7-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեզին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ, տեղի ունեցաւ Գերագոյն Հոգևոր Խորհուրդի (ԳՀԽ) ժողովը:

Նախ ԳՀԽ անդամները աղօթեցին Մայր Աթոռի միաբան նորոգ վախճանեալ Ս. Գիսակ Արքեպիսկոպոս Մուրատեանի հոգւոյ հանգստութեան համար:

Նիստերը վարեց Մայր Աթոռի դիւանապետ Ս. Արշակ Արքեպիսկոպոս Խաչատրեան:

Ս. Միքայէլ Արք. Աջապահեանի, Ս. Բագրատ Արք. Գալստանեանի, Ս. Մկրտիչ Եպս. Պոռշեանի, Ս. Գարեգին Քին. Արսենեանի, ազգային բարերար Սամվէլ Կարապետեանի և ապօրինաբար ազատազրկուած միւս հայորդիներու նկատմամբ նախաձեռնուած քրեական վարոյթներու, իրականացուած դատավարական գործողութիւններու, կայացուած դատավճռի, ատոնց իրաւական անհիմն և խտրական բնոյթի, միջազգային հարթակներու մէջ Եկեղեցւոյ ու եկեղեցականներու իրաւունքներու պաշտպանութեան, ազատ խօսքի և այլախոհութեան նկատմամբ անհանդուրժողականութեան ու տեղեկատուական դաշտին մէջ Եկեղեցին և եկեղեցականները թիրախաւորելու յաճախ կրկնուող դէպքերու մասին զեկոյցներով հանդէս եկան ի. գ. թ. Արա Զոհրաբեանը, իրաւաբան, միջազգային փորձագէտ Արա Ղազարեանը, փաստաբաններ Արամ Վարդևանեանը, Յովհաննէս Խուրոյեանը և ի. գ. թ. Արման Թաթոյեանը:

ԳՀԽը խստօրէն դատապարտեց Եկեղեցւոյ և եկեղեցականներու իրաւունքներու նկատմամբ իրականացուող բացայայտ ապօրինի ոտնձգութիւններն ու ճնշումները, ինչպէս նաև հակաեկեղեցական հռետորաբանութեամբ ատելութեան խօսքի ու անհանդուրժողականութեան տարածումը՝ ընդգծելով, որ նման երևոյթները կը խաթարեն ինչպէս խղճի ու խօսքի ազատութեան սկզբունքը, այնպէս ալ հանրային համերաշխութիւնը: Արձանագրուեցաւ նաև, որ եկեղեցականներուն առաջադրուած մեղադրանքները և խափանման միջոցները հիմնուած են ոչ իրաւաչափ փաստերու վրայ և կը հակասեն արդար դատաքննութեան իրաւունքի ու անձի ազատութեան սահմանափակման միջազգային չափանիշները:

Խորհուրդը վերահաստատեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիրքորոշումը աջակցելու արդարադատութեան հաստատման եւ պաշտպանելու Եկեղեցւոյ սպասաւորներու ու հաւատացեալ ժողովուրդի իրաւունքները՝ վերստին կոչ ընելով իրաւապահ մարմիններուն, յանուն արդարութեան դադարեցնել ապօրինի քրեական վարոյթները և ազատ արձակել ազատազրկուած հոգևորականներ և քաղաքացիական անձինք: Անհրաժեշտ նկատուեցաւ



նաև Յովհաննավանքի նկատմամբ Մայր Աթոռի իրաւունքներու և ծիսաարարողական կեանքի վերականգնումը, հաւատացյալներու հոգևոր-կանոնական կեանքի պաշտպանութիւնն ու եկեղեցականներու բնականոն ծառայութեան ապահովման ուղղուած քայլերը:

Պաքու պահուող զինուորական և քաղաքացիական անձանց նկատմամբ իրականացուող դատական գործընթացներու, արցախահայերու իրաւունքներու պաշտպանութեան մասին զեկոյցեց իրաւաբան Արա Ղազարեանը: Ներկայացուեցան Ադրբեջանի կողմէ մարդու իրաւունքներու խախտման աղաղակող դէպքերը, ընդգծուեցաւ, որ իրականացուող, այսպէս կոչուած, դատավարութիւնները որևէ կապ չունին արդարադատութեան հետ և կը հակասեն միջազգային մարդասիրական իրաւունքի հիմնարար դրոյթներուն:

Բանախօսը կարևորեց ինչպէս Եկեղեցւոյ և միջազգային կազմակերպութիւններու ներգրաւուածութիւնը, այնպէս ալ Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանի և ՄԱԿ-ի իրաւապաշտպան մարմիններու միջոցով գերիներու ազատ արձակմանն ուղղուած իրաւական քայլերու իրականացումը:

ԳՀԽՐ ընդգծեց գերիներու հարցին նկատմամբ շարունակական ուշադրութեան և համակարգուած քայլերու անհրաժեշտութիւնը: Վերահաստատուեցաւ Եկեղեցւոյ պատրաստակամութիւնը շարունակելու ջանքերը Քոյր Եկեղեցիներու ու միջազգային կրօնական կառոյցներու հետ համագործակցութեամբ նպաստելու գերիներու վերադարձին և մարդու իրաւունքներու պաշտպանութեան օրինական մեխանիզմներու կիրառմանը:

Արցախի հոգևոր-մշակութային ժառանգութեան նկատմամբ Ադրբեջանի ոտնձգութիւններուն մասին զեկուցեց ԳՀԽ անդամ, ի.գ.դ. Գեորգ Դանիէլեանը, ներկայացնելով փաստեր, որոնք կը վկայեն Ադրբեջանի կողմէ իրականացուող համակարգուած քաղաքականութեան մասին՝ որ կը միտի հայկական պատմամշակութային արժէքներու ոչնչացման: Նշուեցաւ, որ ադրբեջանական իշխանութեան կողմէ հովանաւորուող պատմական գեղծարարութեան նպատակն է ջնջել տարածաշրջանի հայկական ինքնութեան հետքերը և փորձել օրինականացնել իրենց հաւակնութիւնները հայկական ժառանգութեան նկատմամբ:

ԳՀԽ-ը կարևորեց միջազգային ամենալայն շրջանակներու աջակցութեան ապահովումը և մասնաւորաբար Արցախի հոգևոր-մշակութային ժառանգութեան պահպանութեան ուղղութեամբ Եկեղեցւոյ կողմէ իրականացուող աշխատանքներու առաւել ընդլայնումը:

Պ. գ. թ. , դոց. Միքայէլ Մալխասեան իր զեկույցին մէջ անդրադարձաւ հանրակրթական ծրագրերուն և Հայոց պատմութեան դասագրքերուն մէջ տեղ գտած մտահոգիչ դրոյթներուն: Բանախօսը ներկայացուց օրինակներ, որոնք ցոյց կու տան, թէ ինչպէս կ'աղճատուին Հայոց պատմութեան տարբեր փաստերը և կը խեղաթիւրուին իրադարձութիւնները, նսեմացնելով պատմական դէմքերու եւ դէպքերու, եկեղեցական և պետական գործիչներու պատմական դերը:

ԳՀԽը խիստ մտահոգութեամբ նկատեց, որ նման մօտեցումները կը վտանգեն սերունդներու ազգային ինքնութեան և պատմական յիշողութեան շարունակականութիւնը, կարևորելով ազգային խորհրդանիշներու արժևորման և անոնց հանդէպ յարգանքի ու պատշաճ վերաբերմունքի ձևաւորման անհրաժեշտութիւնը, նաև ընդգծելով Եկեղեցւոյ առաքելութիւնը ժողովուրդի ազգային ինքնութեան, պատմական յիշողութեան և հոգևոր արժէքներու պահպանման գործին մէջ:

ԳՀԽ քննարկեց և որոշեց Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ հայրապետի վախճանման 1700-ամեակին նուիրուած հոգևոր, մշակութային միջոցառումներու կազմակերպման և Կոմիտաս վարդապետի սրբադասման հարցի քննութեան նպատակով ձևաւորել յանձնախումբեր:

Քառօրեայ ժողովին ընթացքին քննարկուեցան նաև Եկեղեցւոյ հովուական կեանքին, կարգապահական ու իրաւական խնդիրներուն և Եկեղեցւոյ առաքելութեան արդիւնաւորման առնչուող հարցեր:

Ժողովը ամփոփուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեան և գնահատանքի խօսքով:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ «ԱՂՕԹՔԻ ՆԱԽԱՃԱՇ» ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Նոյեմբեր 15-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ ընդունեց «Աղօթքի նախաճաշ» նախաձեռնութեան առիթով Հայաստան ժամանած օտարերկրեայ խումբ մը հիւրեր:

Վեհափառը անդրադարձաւ Հայ Եկեղեցւոյ Հայ ժողովուրդի կեանքին մէջ ունեցած կարևոր դերակատարութեան, նշելով որ Սուրբ Էջմիածինը նուիրական սրբավայր է համայն հայութեան համար և պատ-



դիմագրաւելու բոլոր մարտահրաւերները: Ան ընդգծեց, որ Հայոց Եկեղեցին իբրև Մայր Եկեղեցի իր պատմական առաքելութեամբ և հոգածու վերաբերմունքով առանձնակի նշանակութիւն ունի նաև Հայաստանի մէջ ապրող ազգային ու կրօնական փոքրամասնութիւններուն համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց նաև հիւրերու հարցերուն, առնչուած Եկեղեցւոյ և իշխանութեան միջև ստեղծուած լարուածութեան և հակակեղեցական գործողութիւններուն, ի մասնաւորի ապօրինաբար ազատագրկուած հոգևորականներուն ու հայորդիներուն առաջադրուած անհիմն մեղադրանքներուն:

Հանդիպման ընթացքին, անդրադարձ կատարուեցաւ նաեւ արցախահայերու ծանր կացութեան և անոնց կարիքներուն կապուած Եկեղեցւոյ ծրագրերուն, ինչպէս նաև Պաքոյի մէջ պահուող ռազմագերիներուն ու պատանդուածներուն և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգութեան պահպանութեան խնդիրներուն:

ՍՈՒՐԲ և ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ՄԷԶ

Նոյեմբեր 22-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետութեամբ, Միածնաէջ Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ կիրակնամուտի ժամերգութիւն: Յաւարտ ժամերգութեան, նախաձեռնութեամբ Շիրակի, Տավուշի և Արագածոտնի թեմերու հոգևոր դասին մատուցուեցաւ Սուրբ և Անմահ Պատարագ:



Պատարագիչն էր Արագածոտնի թեմի վարչական խորհուրդի ատենապետ Հոգեշնորհ Տ. Շնորհք արեղայ Պալոյեանը:

Սրբազան արարողութեան ներկայ էին Հայ Եկեղեցւոյ թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանութիւնը, Շիրակի, Տավուշի և Արագածոտնի թեմերու հոգևոր սպասաւորները, տարբեր թեմերէ ժամանած ուխտաւոր հայորդիներ, հասարակական և քաղաքական գործիչներ:

Իր քարոզին մէջ Հայր Շնորհք, դիմելով ներկայ հաւատացեալներուն, ընդգծեց, որ մեկտեղուած են Միածնաէջ Մայր Տաճարին մէջ աղօթք բարձրացնելու ապօրինի ազատագրկուած Միքայէլ և Բագրատ արքեպիսկոպոսներու, Մկրտիչ եպիսկոպոսի, Գարեգին քահանայի, ազգային բարերար

Սամվէլ Կարապետեանի ու մնացեալ հայորդիներու, ինչպէս նաև Պաքոյի մէջ պահուող գերիներու ազատութեան համար:

Ապա գոհութիւն մատուցելով Աստուծոյ, Հայր Սուրբը հայցեց Սուրբ Հոգւոյ շնորհները, նորոգելու Քրիստոսի և Սուրբ Եկեղեցւոյ, եկեղեցական կարգերու ու նուիրապետութեան հանդէպ հնազանդութեան և հաւատարմութեան իրենց ուխտը:

Խօսելով Եկեղեցւոյ առջև ծառացած մարտահրաւերներու մասին, Հոգեշնորհ Հայր Սուրբը նշեց. «Անդրադարձ կատարենք մեր իրականութեանը և կը տեսնենք, թէ ինչպէ՛ս է մարտնչող տգիտութեան և ոգևորուած հիստերիայի հենքի վրայ փորձուում մեր հաւատքն առ Քրիստոս, փորձուում Մայր Եկեղեցւոյ և մեր հայրերի հանդէպ մեր հնազանդութիւնն ու խոնարհութիւնը: Արդարև, այսօր փորձուում է հայրենիքի հանդէպ մեր հաւատարմութիւնն ու նուիրուածութիւնը. փորձուում են մեր համբերութիւնը, հաւատքի տոկունութիւնը և աղօթքի յարատւութիւնը»:

Շնորհք արեղան ընդգծեց, որ եթէ ճշմարտապէս լուսաւոր է մեր հաւատքը, եթէ անկեղծ և մաքուր է մեր սէրը, անկասկած, կ'արժանանանք յանուն Քրիստոսի տառապանքներով ու աղօթքներով հաստատուած

աստուածային ողորմութեան ու շնորհների. «Բողոքիս յայտնի է, թէ ինչպէ՛ս են այսօր փորձեր արւում մեր Առաքելական Սուրբ Եկեղեցին կեղծ, այլընտրանքային եկեղեցով փոխարինելու, Եկեղեցու ծաղրապատկերը ձևաւորելու, որում ամեն ինչ իր կեղծ «ճիշտ»-ն ու շինծու «կարգաւորութիւն»-ը ունի: Եւ պարզ է, որ այնտեղ Աստուած չի կարող բնակուել», - յաւելեց Հայր Սուրբը:

Աւարտին, Հայր Շնորհք պատգամեց յարատեւ աղօթքի մէջ, պատրաստ ըլլալ մտնելու նեղ դռնով, միանալ Քրիստոսին, որպէսզի Տէրը մեզ պահէ և պահպանէ ամեն տեսակի հոգևոր և մարմնավոր փորձութիւններէ և դարձնէ Իր անպատում օրհնութիւններու ժառանգորդը:

Սուրբ Պատարագի «Տէր, ողորմեա» երգեցողութեան ժամանակ հոգևորականներն ու ներկայ հաւատացյալները առանձնական աղօթք բարձրացուցին ապօրինաբար ազատագրկուած հոգևորականներու, ազգային բարերարի և բոլոր գերեալներու ազատութեան, ինչպէս նաև հայրենի երկրի խաղաղ ու բարօր կեանքին համար:



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ և ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ՄԷՋ

Վեհափառ հօր նախագահութեամբ Նոյեմբեր 25-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ գումարուեցաւ հայաստանեան եպիսկոպոսներու և թեմակալ առաջնորդներու ժողով:

Ժողովին քննարկուեցաւ վերջին շրջանին առանձին հոգևորականներու կողմէ Սուրբ Պատարագի արարողութեան ընթացքին Ամենայն Հայոց Կաթողիկոսի և թեմակալ առաջնորդի անուններու յիշատակութեան միտումնաւոր գեղջման խնդիրը:

Եպիսկոպոսաց դասը դատապարտելի նկատեց սոյն երևոյթը՝ արձանագրելով, որ եկեղեցաբանական տեսանկիւնէն հակականոնական է և կրնայ հանգեցնել հերձուածի: Ընդգծուեցաւ որ նման գործողութիւնները ենթակայ են խստագոյն պատիժի, եթէ եկեղեցականը չզղջայ և չսրբագրէ իր հակականոնական ընթացքը սահմանուած կարգով:

Ժողովը կարևոր նկատեց, որ հոգևորականները չտարուին պառակտիչ գործողութիւններու և սաղրանքներու, պահպանեն միաբանութեան ոգին՝ յանուն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւոյ անսասանութեան և առաւել զօրացման:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԵՐՄԱՆԻՈՑ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Նոյեմբեր 27-ին, Վեհափառ Հայրապետը ընդունեց Գերմանիոյ Աւետարանական եկեղեցւոյ արտերկրի եպիսկոպոս Ֆրանք Կոպանիայի գլխաւորած պատուիրակութիւնը, ուղեկցութեամբ Գերմանիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Սերովբէ եպիսկոպոս Իսախանեանի:



Վեհափառ Հայրապետը անդրադարձավ միջազգային հարթակներուն և տարբեր ընկերային ու կրթական ծրագրերու ծիրէն ներս երկու Եկեղեցիներուն միջև ձևաւորուած գործակցութեան՝ ի նպաստ հոգևոր առաքելութեան զօրացման:

Իր հերթին Ֆրանք Եպիսկոպոս Կոպանիա խօսեցաւ Գերմանիոյ Հայոց Թեմի հետ ձևաւորուած յարաբերութեանց մասին, նաև վստահեցուց, որ Հայաստանի համար այս դժուարին ժամանակահատուածին մէջ աղօթակից են Հայ ժողովուրդին ու Հայոց Եկեղեցւոյն:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Նոյեմբեր 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ, նախագահութեամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, նախատեսուած էր Գերագոյն հոգևոր խորհուրդի հայաստանաբնակ անդամներու ժողով, որուն իրաւագոր նիստը հնարաւոր չեղաւ գումարել Տ. Նաւասարդ Արք. Կճոյեանի, Տ. Աբրահամ արք. Մկրտչեանի, Տ. Վազգէն արք. Միրզախանեանի, Տ. Վրթանէս եպս. Աբրահամեանի, Տ. Գեորգ եպս. Սարոյեանի բացակայութեան պատճառով:

Այնուամենայնիւ, ներկայ ժողովականները մասնաւոր անդրադարձ ունեցան Նոյեմբեր 27-ին ինը եպիսկոպոսներու ստորագրութեամբ հրապարակուած յայտարարութեան: Արձանագրուեցաւ, որ յիշեալ շարադրանքն ամբողջապէս խեղաթիւրուած կը ներկայացնէ Տ. Արշակ արք. Խաչատրեանի խնդիրով ստեղծուած յանձնախումբի աշխատանքը: Յանձնախումբը, ըստ էութեան, որն է նիստ չէ գումարած և նոյնիսկ հնարաւորութիւն չէ տուած Արշակ Սրբազանին հանդիպելու իր հետ, իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացուած յանձնախումբի անդամներու եզրակացութիւնը պատշաճ ընթացակարգով չէ կազմուած: Նշուեցաւ նաև, որ յանձնախումբի կողմէ որն է պաշտօնական դիմում չէ կատարուած Քննչական կոմիտէի Սրբազանին վերագրուող տեսանիւթի փորձաքննութեան համար, իսկ յանձնախումբի առանձին անդամին կողմէ ստացուած եզրակացութիւնը ձեռք է բերուած օրէնքի ակնյայտ խախտումով, սպառիչ և լիարժէք չէ և չի կրնար արժանահաւատ հիմք ծառայել, որով և չէր կրնար ընդունելի նկատուիլ Հայոց Հովուապետին կողմէ: Տեղեկացուեցաւ նաև, որ Նոյեմբեր 24-ին, Յանձնախումբի ատենապետ Տ. Խաժակ արք. Պարսամեանը, հաշուի առնելով առկայ յանձնախումբին արդիւնաւետ աշխատելու դժուարութիւնները, գրութիւն է ուղղած Վեհափառ Հայրապետին՝ առաջարկելով հարցի արդար քննութեան իրականացման համար ձևաւորել երեք անձերէ կազմուած նոր յանձնախումբ, որը կրնայ նաև քննարկել Սրբազանի ծառայութեան առժամայ կասեցման հարցը մինչ յանձնաժողովի աշխատանքներուն աւարտը: Նոր յանձնախումբի առաջարկին վերաբերեալ Նոյեմբեր 25-ին իրազեկուած են և համաձայնութիւն տուած են գործող յանձնախումբի անդամները:

Այսու, ակնյայտ է, որ յայտարարութեան մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հասցէին հնչող մեղադրանքները բացարձակ անհիմն են և շինծու, Սրբազանի անձին թիրախաւորումը ու կանխակալ կարծիքներու ձևաւորումը՝ անթոյլատրելի:

Դատաւարտելի և անընդունելի համարելով որդեգրուած սոյն կեցուածքը՝ ժողովականները խիստ հրամայական նկատեցին, որ եկեղեցականները վերադառնան կանոնական դաշտ՝ իրենց մտահոգութիւնները արծարծելով Եկեղեցւոյ բարձրագոյն ժողովական մարմիններուն մէջ, և չխաթարեն Եկեղեցւոյ միաբանութիւնը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՅ ԴԱՄԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ
28.11.2025

«Եղբայրներ՝, կը յորդորեմ ձեզ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով, որ բոլորդ միաբանիք, և ձեր մէջ պատակտումներ չըլլան, այլ հաստատուիք նոյն մտքով և նոյն համոզումով» (Ա Կորնթ. Ա 10)

Մտահոգ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ շուրջ և եկեղեցւոյ ներսը ծաւալող իրադարձութիւններով՝ կը վերահաստատենք մեր ուխտը՝ հաւատարիմ մնալով ուղղափառ վարդապետութեան, ծիսականոնական դրութեան և Սուրբ Թադէի Աթոռի գահակալին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Օսրիպոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ «ուղիղ վարդապետութեամբ մեզ կ'ուսուցանէ ճշմարտութեան խօսքը» (Խորհրդատետր):

Գնահատելով ստեղծուած իրավիճակը, անընդունելի կը համարենք եկեղեցւոյ ներքին կառավարման աշխարհիկ իշխանութիւններու միջամտութիւններն ու սպառնալիքները:

Անհանդուրժելի կը նկատենք իշխանական մեքենայութիւններու միջոցով բարձրաստիճան հոգևորականներ և քահանաներ թիրախաւորելու և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահազրկման օրակարգը սպասարկելու նպատակով եկեղեցւոյ միասնականութիւնը պառակտելու ակնյայտ փորձերը: Եկեղեցւոյ ներսը ծագած դաւանական, վարդապետական, ծիսականոնական և կարգապահական խնդիրները բացառապէս կը լուծուին Սուրբ Հոգիի ներշնչմամբ, Հայ Եկեղեցւոյ կանոնական ընթացակարգերով, «միակամ և միախորհուրդ» առանց հոգևորականներու և իրաւասու ժողովական մարմիններու իրաւունքներու իւրացման:

Ազգային-եկեղեցական ժողովով ընտրուած և վաւերական օծում ունեցող Հայոց Հայրապետը ունի Սուրբ Հոգւոյ պարգևելի բոլոր շնորհները, որոնք կը բաշխուին հոգևոր սպասաւորներուն՝ ձեռնադրութեան խորհուրդով կամ հայրապետական տուչութեամբ:

Նուիրապետական կարգի մէջ բոլորին իրաւունքներն ու պարտականութիւնները կը սահմանուին ըստ այն շնորհներուն, որոնք կը յիշուին ձեռնադրութեան աղօթքներուն մէջ: Ո՛չ որ չի կրնար եկեղեցական իր իշխանութեան սեփականութիւն դարձնել այնպիսի իրաւունքներ, որոնք ձեռք կը բերուին քաղաքական հանգամանքներով կամ արտաքին միջամտութեամբ: Եւ քանի որ հոգևորականը ձեռնադրութեամբ կը ստանայ այնքան, որքան կը յիշուի Սուրբ Խորհուրդի ընթացքին, այս սկզբունքէն շեղողը կը չարաշահէ իր իշխանութիւնը և դատապարտելի է Հայ Եկեղեցւոյ վարդապետութեամբ:

Աներեր մնալով մեր հոգևոր առաքելութեան մէջ, կը պատգամենք մեր եկեղեցւոյ քահանայից դասին և հաւատացեալներուն չգայթակղիլ և չտրտմիլ հոգևորականութեան հասցէին հնչած զրպարտութիւններէն և հալածանքներէն, չօտարանալ Մայր Եկեղեցւոյ հոգևոր կեանքէն: Փորձութիւններով լեցուն այս շրջանին կ'ակնկալենք ձեր մասնակցութիւնը եկեղեցւոյ աղօթական և խորհրդական կեանքին, հայցելով, որ Աստուած ապաշխարութեան ճանապարհով մաքրագործէ ու հաւատքի մէջ զօրացնէ մեզ ամենքս՝ միասնութեան մէջ պահելով մեր Սուրբ Եկեղեցին և անսասան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

«Եկեղեցիները ո՛չ պարզն են թագաւորներու, ո՛չ ճարտար արուեստ են, ո՛չ գիւտն են իմաստուններու, ո՛չ աւարը զինուորներու քաջութեան և ո՛չ ալ խաբէութիւնը դներու, այլ շնորհն են Մեծ Աստուծոյ: Անոր հիմքերը դրուած են հաստատուն վեմի վրայ, որ ոչ ներքինները կրնան խախտել, ոչ վերինները շարժել: Եւ այն, ինչ երկինքն ու երկիրը չեն կրնար սարսել, մարդոցմէ ոչ որ թող չհաւակնի յաղթել զայն» (Սուրբ Եղիշէ Վարդապետ):

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ՄԷՋ ՆՇՈՒԵՅԱԻ ՀԱՅՈՅ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՍԱԻՈՐԻՉՆԵՐՈՒՆ ՏՕՆԸ

Նոյեմբեր 29-ին, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տօնախմբեց հայոց առաջին լուսաւորիչներ Սուրբ Թադէոս և Սուրբ Բարդուղիմէոս առաքելաւորներուն տօնը:

Վեհափառ Հօր կոնդակով տօնը հռչակուած է Աստուածամուխ Սուրբ Գեղարդի ուխտի օր:

Ամենայն Հայոց Հայրապետին հանդիսապետութեամբ, Միածնաէջ Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի Գեորգեան հոգևոր ճեմարանի ասպիրանտուրայի բաժնի ղեկավար Գերաշնորհ Տ. Դանիէլ եպիսկոպոս Ֆրնտրգեանը:

Ներկայ էին թեմակալ առաջնորդներ, միաբաններ և բազմում ուխտաւորներ:



Պատարագի ընթացքին, թափօրի առաջնորդութեամբ, Վեհափառի ձեռամբ Մայր Տաճար բերուեցաւ Սուրբ Գեղարդը:

Իր քարոզին մէջ, պատարագիչ Սրբազան Հայրը անդրադառնալով Հայոց առաջին լուսաւորիչներու տօնի խորհուրդին ընդգծեց. «Առաքեալները Հայաստան չեկան զօրքով, չեկան քաղաքական ծրագրերով, չեկան ազգային փառքի խոստումներով: Անոնք եկան Յիսուս Քրիստոսի և Իր թագաւորութեան յոյսով ու սիրով: Եւ այդ Աւետարանը ծնաւ առաջին քրիստոնէայ ազգը: Սա մեր իրական գանձն է, սա մեր ժառանգութիւնն է և սա է Հայաստանի հոգին»:

Անդրադառնալով մերօրեայ մարտահրաւերներուն, Դանիէլ Եպիսկոպոս ընդգծեց, որ դարերու ընթացքին Հայ ժողովուրդը պահած է իր ինքնութիւնն ու պահպանած Սուրբ Եկեղեցին, ոչ թէ ուժով, այլ միասնական պայքարով, համատեղ տառապանքով ու հաւատքով:

«Մենք պահել ենք միմեանց անապատներից մինչև քարտրներ, մինչև ցեղասպանություն, մինչև լուռ հալածանքներ: Մենք չենք ապրել որովհետև ուժեղ էինք, այլ որովհետև մէկ մարմին էինք, մէկ Եկեղեցի, մէկ աղօթք, մէկ տեսիլք, մէկ յոյս՝ խաչեալ և յարութիւն առած Քրիստոսով:

... Մեր առաքեալներն այսօր յիշեցնում են, որ երկրի յոյսը քաղաքական յաղթանակները չեն, այլ հոգևոր յարութիւնը և սրբութեամբ ապրելը»,- ըսաւ Դանիէլ Եպիսկոպոս, յորդորելով ապաշխարել, քննել սրտերը, մերժել բաժանման թոյնը և միմեանց վերաբերուիլ իբրև Յիսուս Քրիստոսի մարմնի անդամներ: Սուրբ Պատարագի աւարտին Հայոց Հովուապետը «Պահպանիչ» աղօթքով և հրաշագործ Սուրբ Գեղարդով օրհնեց ներկայ ժողովրդը, ապա հաւատացեալները երկրպագեցին ու համբուրեցին համաքրիստոնէական սրբութիւնը:

Ցաւակցութիւն

Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս
Նաւասարդեան, Թեմական Խորհուրդը եւ
Փարոսի Խմբագրական կազմը իրենց
ցաւակցութիւնը կը յայտնեն նախկին
թեմական խորհուրդի եւ Ս. Յարութիւն
Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի անդամ Պրն
Աւօ Գարակէօզեանին իր մօր, հանգուցեալ
Տիկին Ազատուհի Գարակէօզեանի
մահուան առիթով որ տեղի ունեցաւ
25 Նոյեմբերին

Տիկին Գարակէօզեան Ս. Յարութիւն
Եկեղեցւոյ նուիրեալ անդամուհի էր, որ
տասնամեակներ շարունակ իր աջակցութիւնը
բերած էր Տիկնանց Օժանդակ
Յանձնախումբին: Ան շաբաթական դրութեամբ
մնայուն ներկայութիւն էր ՀՀԲԿ-ի
կազմակերպած ծրագիրներուն մէջ:
Կ'աղօթենք իր հոգւոյն խաղաղութեան
համար:



In Sympathy

*With His Grace Bishop Vardan Navasardyan
and the Diocesan Council, Paros editorial
extends its sincere condolences to former
Diocesan and Holy Resurrection Parish
Council member Mr Avo Karageuzian on
the passing of his mother the late*

Mrs Azadouhi Karageuzian
*who entered her eternal rest on
25 November 2025.*

*Mrs Karageuzian was a devoted church
member and served actively in the Church
of Holy Resurrection over many decades
bringing her assistance to the Ladies
Auxiliary. She was a regular face at church
each week attending the ACWC programs.*

*May she now rest in eternal peace and her
memory be blessed among the righteous.*

Diocesan News

Saturday 1 November – His Grace Bishop Vardan Navasardyan accompanied by Reverend Father Avetis Hambardzumyan attended the “Badani Hayaked” (Young Armenian Scholar) No. 4 Armenological Development Competition at the Nalbandian Hall of Hamazkaine Galstaun College.



This was the fourth competition since 2002 organised by the “Badani Hayaked” Committee operating under the Hamazkaine Australia Regional Committee.

This year’s theme was ARTSAXH. The event began with the Armenia and Artsakh national anthems and a moment of silence in honour of the victims of the Artsakh wars. After the opening remarks by Mesdames Alice Manoogian and Anna Chokekjian, Mrs Chokekjian took the stage and explained the procedure before the competition began.

11-12 year old students from six Armenian schools participated: AGBU Alexander School, Hamazkaine Arshak and Sophie Galstaun College, Hamazkaine Tarkmanchatz School, Hamazkaine Toomanian School, Hamazkaine Serop Papazian School and Hamazkaine Mesrob Mashdots-Mateosian School (Melbourne). The students were divided into four teams by drawing lots: Hawk (Pazeh), Dove (Aghavni), Eagle (Ardziv) and Swallow (Dzidzernag), each group consisting of six students, one student from each school.



The adjudicating panel consisted of Mrs Alin Marashlian-Keyvanyan, Messrs Assadour Shougayan and Arek Yapoudjian. The questions were related to the history, dialect, customs, food, and spiritual world of Artsakh. The hundreds of attendees and a small number of those who watched the live broadcast were enriched with new knowledge about Artsakh, as testified in their words by His Grace Bishop Navasardyan and Mr Shougayan. The fact that the participating students were determined to return Artsakh to the Armenians and Artsakh people to return to the Artsakh created great enthusiasm. As Mrs Chokekjian noted, today’s determined youth is tomorrow’s determined leader.

The competition ended with the victory of the “Dzidzernag” team (62 points). The Eagle team received 58, the Hawk team received 51, and the Dove team received 50. The organising committee awarded all participants with special certificates.

Two artists who visited Sydney on the 25th anniversary of the Hamazkaine Armenian Sydney Dance Ensemble, Honored Artist of Armenia, Kamo Seyranyan (Duduk and clarinet) and singer Seda Seyranian enriched the atmosphere with music and quality songs, performed and encouraged the audience to join in a dance of Armenian *Shourchbar*.

At the end of the program, the adjudicators, Mr Assadour Shougayan and Mrs Alin Marashlian spoke, expressing their appreciation to everyone who played a role in the success of this magnificent event. The Chairman of Hamazkaine Regional Committee, Mr Kevork Vartanian, was invited to the stage and appreciated the choice of the subject, the principals of all the schools, the participating youth and the organising committee, and the school teachers for their unconditional support. After congratulating the winning team, he said, "... but the real winner was Armenian culture and the Armenian school." Addressing the students, Mr Vartanian confirmed that by participating in Badani Hayaked, the door to future activities in favour of the Armenian nation opens before them, including the return of Artsakh to its owner, the Armenian nation. "This competition is an incentive to develop your Armenian language skills and sense of national identity," he concluded.

With the words "I am happy every time I set foot in an Armenian School, there the Armenian spirit is revived in my heart and mind," His Grace Bishop Navasardyan began his closing speech. He characterised this initiative as unique, which is an expression of the practical implementation of the mission of Hamazkaine, and which serves the preservation of Armenian identity, Armenian education and spirit. "Today I witnessed the future of these young people becoming Armenian scholars," His Grace said, wishing them the continuation of their path in Armenian studies and the achievement of new horizons. His Grace highly appreciated the idea of choosing the topic of Artsakh and making us all travellers to Historical Artsakh. He appreciated the joint effort in making the initiative a success. However, he expressed great appreciation for the Armenian teachers, before whose unparalleled work one can only bow down. The Bishop then closed the ceremony with the prayer of protection, after which he was invited to participate in a light supper.



Saturday 1 November – At the invitation of young Armenian singer Charlie Chech (Tchetchenian), Bishop Navasardyan attended his concert at the Hornsby RSL Club. His Grace was accompanied by Deacon Boghos Keleshian. Thanks to his persistent work, Charlie has become a notable singer in Australia, especially a performer of songs sung in the style of Frank Sinatra and Matt Monro.

His Grace appreciated Charlie and his parents, who have been a great support and have encouraged him to climb the ladder of success.

Sunday 2 November – Bishop Navasardyan accompanied by the Reverend Fathers and members of the Diocesan and Parish Councils, received the two HSC scholarship recipients at the Diocesan Centre, namely Lela Tchamitchian from Hamazkaine Galstaun College and Thomas Jamcotchian from William Clarke College. Lela was the top-ranking student in Armenian studies in the 2024 HSC examinations while Thomas achieved over 90 out





of 100, becoming the highest-achieving Armenian student in Legal Studies. Accordingly, Lela was awarded the Armenian Apostolic Church of Holy Resurrection Church annual Armenian scholarship under the patronage of the Levon and Mary Shohmelian, presented by Dr and Mrs Garo and Laura Artinian, and Thomas the Legal Studies scholarship under the joint patronage of Messrs Hagop Boghossian and Richard Aslanian of Connect Legal, presented by Mr Boghossian. His Grace appreciated and congratulated the award-winning students, as well as the donors who established the scholarships. This gathering, which has become a tradition, was hosted by the Arachnortaran Ladies Guild.

Monday 3 November – The first meeting of the newly formed Grants Committee was held at the Diocesan Centre, chaired by Bishop Navasardyan. The newly formed committee includes representatives from the Sydney and Melbourne Parish Councils, who discussed the possibilities of new programs that will develop parish-community life.



Tuesday 4 November – His Grace and the Chancellor Deacon Nishan Basmajian participated in the six-monthly meeting of the Heads of Churches of the New South Wales Ecumenical Council. Bishop Vardan reported on the work of the Diocese, parishes and communities and the challenges faced, such as the



preservation of language and identity, etc.

Deacon Nishan reported on the ecumenical work carried out in New Zealand. The General Secretary of the Council, Reverend Dr. Rod Benson, informed the congregation about the extensive work of the Council. The representative of the Quakers, Wies Schuiringa, presented the activities of the Quakers in Australia, also providing historical information about this peace-loving Christian institution.

At the end, some organisational decisions were taken.

The closing remarks were delivered by the President of the Council, Reverend Carmel Ierachi-Sheraton.

Tuesday 4 November – His Grace Bishop Vardan presided over the regular meeting of the Diocesan Council. The meeting ratified decisions related to the ACWC, the Ararat Cultural Centre and the Holy Trinity Church.

Thursday 6 November – Under the auspices of Bishop Navasardyan and organised by the Hamazkaine Literary and Cultural Committee, the launch of Sassoon Grigorian's book "Smart Nation Second Edition" took place in the Edgarian Hall of the Holy Resurrection Church. The keynote speaker was Ms Gladys Berejiklian, a former Premier of New South Wales.



After her bilingual opening remarks to the approximately sixty Armenian and non-Armenian audience, Mrs Nora Bastajian invited Ms Berejiklian to deliver her speech. The former Premier, in flawless Armenian and in English, delivered her address, where she spoke eloquently about her long-time friend and colleague Sassoon Grigorian, highly appreciating the first volume of the same title by the author, published in 2016, in which Mr Grigorian provided advice to the Armenian state, 70 percent of which was implemented and carried out by the state's administration.



The publisher of both volumes is the Komitas Institute, London, whose director Ara Sarafian appeared in a video and congratulated Sassoon for his patriotic practical advice, which served as an impetus for this institution to publish the two volumes nine years apart.

Mr Sassoon Grigorian presented his book in detail, where he reflected on Armenia-Diaspora relations, Armenia's security, Armenian-Turkish relations, Armenian-Azerbaijani relations, technology, science, practical use of artificial intelligence, church-state relations and other areas. He expressed his gratitude and appreciation to Bishop Navasardyan, the church bodies, Gladys Berejiklian, the Hamazkaine and the Literary and Cultural Committee, as well as Mr Stepan Kerkyasharian, who has always encouraged and guided him throughout his life.



Before closing with the prayer of protection, His Grace warmly welcomed everyone, Sassoon Grigorian, Gladys Berejiklian, the great family of Hamazkaine, especially the Literary-Cultural Committee, for organising the event, as well as all who were present, as it was kind of participation in the work of homeland building. He quoted the Old Testament and said that Solomon the Wise said blessed are those who seek wisdom. The Bishop saw the search for wisdom in Sassoon Grigorian's book and there he saw the great value of that book. The Primate advised everyone to seek the advantages of our nation and homeland, without forgetting to remember what our disadvantages have been and what they are today. The Bishop noted that one of the advantages of Armenia is being a Christian country.

Citing the Diaspora as an example, he spoke eloquently about the children of our nation who, while remaining Armenian Christians, have participated in the life of various regions of non-Christian countries of the Middle East and have made their contribution to the development process of those countries.



Bishop Vardan appealed to everyone, even if physically far from the Homeland, each of us is a part of it, therefore we must participate in its development individually and collectively, always keeping in mind that political currents, as well as governments, come and go, but the Homeland is permanent and eternal.

Greatly impressed by the practical advice Sassoon Grigorian gave to Armenia and its leadership structures, His Grace suggested that similar efforts be carried out at the community level as well. After the closing, a book signing took place. Sassoon Grigorian donated the proceeds from the books to the Hamazkaine Regional Committee.

Friday 7 November – Bishop Navasardyan received His Eminence Cardinal Mykola Bychok, the prelate of the Ukrainian Greek Catholic Church in Melbourne, at the Diocesan Centre. Diocesan Council members and representatives of Armenian national organisations were also present at the meeting. Lunch was hosted by Bishop Vardan in honour of Cardinal Bychok.



Monday 10 November

– His Grace received the members of the ARS Araz Branch Committee led by the Chairwoman Mrs Dalida Injejkian. His Grace was accompanied by Mr Harout Okgian Treasurer of the Parish Council of Holy Resurrection Church. The Bishop was informed about the activities of the Araz Branch and expressed his solidarity and support to the ARS family in general and the Araz Branch in particular.

Wednesday 12 November – His Grace Bishop Navasardyan attended the regular meeting of the Conference of Bishops and Representatives of the Middle Eastern Apostolic Churches in Australasia (AMEC) at St Thomas the Apostle Chaldean Diocese in Bossley Park, hosted by Archbishop Amel Shamon Nona, Primate of the Chaldean Church.



The participants of the meeting became closely acquainted with His Grace as this was his first AMEC meeting. The issues of the ECWA, an institution operating under the auspices of AMEC, were discussed, as well as the situation of Christians in Syria.

At the end of the meeting, lunch was hosted by Archbishop Nona.

Saturday 15 November – Bishop Vardan met up with his former Youth Bible Study group of the Church of Holy Resurrection with their young families for a social gathering in the Edgarian hall. It was a joyful reunion and reconnection of old friends with their pastor from 20 years ago.



Saturday 15 November – Accompanied by Archpriest Reverend Father Barteve Karakashian and Reverend Father Ashot Abrahamyan, Bishop Navasardyan attended the performance of the comedy “Our Sin”, authored by Artur Edar and staged by Ghazar Garabedian, presented by the Hamazkaine “Noubar Khachadourian” Theatre Group.

Monday 17 November – Bishop Navasardyan the Primate, presided over the periodic meeting of the Sydney branch of the Hayastan All-Armenian Fund. During the meeting, fruitful discussions took place on future projects. The committee also discussed the progress and preparations for the December 5th event, including key fundraising initiatives.

Wednesday 19 November – Bishop Navasardyan received the Head of the Assyrian Community of Wellington New Zealand, Mr Ashur Yalda. The Bishop had met Mr Yalda during his visit to Wellington last September. He and his guest discussed the development of fraternal relations and cooperation between the Armenian and the Assyrian communities.



Wednesday 19 November – Bishop Vardan received a group of teachers representing Armenian schools in Sydney at the Diocesan Centre. The plan to organise a teachers' conference in 2026 was discussed.

Wednesday 19 November – Bishop Vardan Navasardyan, accompanied by Father Avetis Hambardzumyan and Mr Ara Kopoushian Chairman of the Holy Resurrection Church, warmly greeted His Holiness Baselios Marthoma Mathews III, Catholicos of the East and Malankara Orthodox Syrian Church of India on his arrival at Sydney's Kingsford Smith International airport who was visiting the Australian



parishes on a Pontifical visit for the very first time.

Friday 21 November – Together with church benefactors Mr and Mrs Avo and Jackie Tevanian, Diocesan Primate Bishop Vardan Navasardyan attended an ecumenical dinner held in honour of His Holiness Baselios Marthoma Mathews III, Catholicos of the East and Malankara Orthodox Syrian Church of India to celebrate the first Anniversary of the Asia Pacific Diocese.



Sunday 23 November – In the presence of several hundred faithful, His Holiness Baselios Marthoma Mathews III, Catholicos of the Indian Malankara Orthodox Church, visited Holy Resurrection Armenian Mother Church. Under the Baldachin, His Holiness was led into the church to the Hrashapar hymn, where words of welcome were conveyed. His Holiness similarly addressed the congregation and blessed all who were present.



After the ceremony, His Holiness was the lunch guest of Bishop Navasardyan in the Diocesan Centre. Accompanied by clergy, diaconate and representatives of the Diocesan and Parish Councils as well as invited community members, His Grace escorted His Holiness in a procession to the Diocesan Centre. The hospitality was entirely prepared by the Arachnortaran Ladies Guild.



Below is the text of His Grace Bishop Navasardyan's welcome address:

Your Holiness, Excellency, Reverend Fathers, Honourable Members of the Diocesan Council, and Holy Resurrection Church Parish Council, Beloved Benefactors, and Faithful, It is with profound joy and deep spiritual gratitude that we welcome You today to the Holy Resurrection Cathedral, the spiritual home of the Armenian Apostolic faithful of Australia and New Zealand. Your Holiness' first patriarchal visit to Sydney and our community, brief though it may be, is a true blessing and a historic moment for our Diocese. I am honoured beyond words that You have graciously considered this humble request of mine, as a representative of the Mother See of Holy Etchmiadzin, and the Catholicos of All Armenians Karekin II, as a Pontifical Legate for India and the Far East, and bestowed upon our community the gift of Your presence.

On behalf of the clergy of our Diocese, the Diocesan Council, our parish leaders, and all the faithful, I extend heartfelt greetings to Your Holiness, and to the esteemed members of Your accompanying delegation. May your time among us be filled with joy, fellowship, and the peace of Christ.

The Apostle Paul encourages us to:

“Welcome one another, therefore, just as Christ has welcomed you, for the glory of God.” (Romans 15:7). And today, in that same spirit of Christian love, we welcome You – our father in the apostolic faith.

The Malankara Orthodox Syrian Church, as we all know, is one of the **five Oriental Orthodox sister Churches** with whom we share the same apostolic roots, the same Christ-centred confession, and the same unbroken fidelity to the ancient faith. The bond between our Churches is not only theological but deeply fraternal.

As we know, Armenians appeared in India and built their home centuries ago and have always enjoyed the warm brotherly attitude of the Indian people. To this day, our two countries, two churches, and two peoples maintain those deep friendly ties.

A beautiful testimony to this brotherhood is found here in our own Diocese: the current Cor-bishop of Sydney and our beloved brother in Christ, **Rev. Fr. Thomas Varghese**, received his priestly ordination at this very Holy Altar of the Armenian Apostolic Church—through the blessing and permission of my blessed predecessor. This sacred memory shines as a symbol of our unity and love in Christ.

Scripture teaches us:

“A new commandment I give to you, that you love one another; just as I have loved you.” (John 13:34)

Today, Your Holiness’ presence among us is a living expression of that Christ-commanded love—uniting our Churches in friendship, faith, and mutual respect. We pray fervently for Your Holiness’ health and strength, and for many years of blessed patriarchal leadership. May God grant You wisdom like that of Solomon, steadfastness like that of St. Gregory the Illuminator, and pastoral love like that of the holy apostles.

“And may the peace of God, which surpasses all understanding, guard your hearts and your minds in Christ Jesus.” (Philippians 4:7)

Your Holiness,

With deep respect, heartfelt gratitude, once again we welcome You and offer our prayers for Your ministry, for the Malankara Orthodox Syrian Church, and for the flourishing of our shared apostolic witness in the world.

